

2/1/11

ՅԵ. Գ.Ա.ԶԱՐԹԱՆ

ԿԵՐԱՐՈՒՅՍԵՐԸ ՆՐԱՆՑ
ՀԱՎԱՔԵԼԸ ԶՈՐԱՑՆԵԼՆ
ՈՒ
Պ Ա Հ Պ Ա Ն Ե Լ Ը



ԳՅՈՒԳԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

1934

ՅԵՐԵՎԱՆ

633
2-15

633-
2-15

24 SEP 2000
SOS

ՅԵ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԿԵՐԱԲՈՒՅՍԵՐԸ, ՆՐԱՆՑ
ՀԱՎԱՔԵԼԸ, ԶՈՐԱՑՆԵԼՆ
ՈՒ
Պ Ա Հ Պ Ա Ն Ե Լ Ը

18.06.2013

18 441



4680
39

Պատ. խմբագիր՝ Արտ. Արրահամյան
Լեզվ. խմբագիր՝ Զավախեցի
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. հունիսի 25ին
Ստորագրված է տպագրելու 1934 թ. հուլիսի 7-ին
Թույլատրված է պլավիտի լիազոր № 272
Հրատ. № 118, տիրաժ 2000, պատվեր № 436

Յ Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Սոցիալիստական անասնապահության արագ զարգացման առաջնակարգ պայմաններից մեկը կերի ուժեղ բազայի ստեղծումն է: Անասունների համար պահանջվող կերի հիմնական մասը— խոտն ստացվում է մարզագետիններից: Խոտը կերերի մեջ ամենաուժեղը սալ, միաժամանակ հիմնական կերն է համարվում: Դժբախտաբար մեր վոչ բոլոր շրջաններն են լրիվ չափով խոտով ապահովված, այդ պատճառով էլ խոտը փոխարինվում է դարմանով, վորը չի կարող բարձրացնել անասունների արդյունավետությունը:

Տարվա ընթացքում (ձմռան ամիսներին) մեկ խոշոր գլուխ անասունի համար պահանջվող 120—130 փութ խոտի փոխարեն տրվում է վոչ ավել 30—40 փութ, շատ դեպքերում դրանից էլ պակաս:

Հենց այդ պատճառով անասունները ձմեռվա ընթացքում տալիս են հնչին քանակությամբ մթերք. իսկ յերբեմն այդ էլ չեն տալիս: Խոտի այս պակասը հիմնականում այն բանի հետևանք է, վոր մեր բնական խոտհարքների բերքատվությունը շատ ցածր է: Մեկ հեկտար խոտհարքից—նորմալ պայմաններում, վոր պետք է ստացվի առնվազն 150—200 փութ խոտ, ստացվում է 60—80 փութ—կեսից էլ պակաս:

Յեթե ընդունենք, վոր մեզ մոտ Խորհրդային Հայաստանում կա 130 հազար հեկտար բնական խոտհարք, ապա յուրաքանչյուր տարի բերք պետք է ստացվեր 19—25 միլիոն փութ, մինչդեռ ստացվում է 8—10 միլիոն փութ, այսպիսով կորուստ ենք ունենում մոտ 11—15 միլիոն փութ խոտ:

Այս խոշոր կորուստները հետևանք են նախ և առաջ այն բանի, վոր յերկար տարիներ բարբարոսաբար շահագործելով բնական խոտհարքները, բոլորովին հոգ չի տարվում այդ խոտհարքները բարելավելու ուղղությամբ (փոցխել, պարարտացնել և այլն), ինչպես այդ արվում է մեր կուլտուրական բույսերի նկատմամբ: Պարզ է, վոր նման պայմաններում մարզագետինները

տարեց-տարի կկորցնեն իրենց բերքատուության ունակութիւնը:

Յեթե նման դրութիւնը հանդուրժելի չիբ անհատական տնտեսավարության պայմաններում, այսոր այլևս անհանդուրժելի չի այդ սոցիալիստական պլանային սիստեմում (խորհրդատեսութիւնների և կոլտնտեսութիւնների գոյության պայմաններում): Ուստի մեր խորհրդատեսութիւնները և կոլտնտեսութիւնները հատուկ ուշադրութիւն պետք է դարձնեն մարգագետինների բարելավման վրա, նրանց վերաբերմամբ ևս հետևողականորեն կիրառելով այն միջոցառումները, վորոնք կնպաստեն վերջինների վորակի և բերքատուության բարձրացմանը:

Սոտի քանակական կորստին զուգընթաց, խոշոր կորուստ ենք ունենում նաև վորակի ուղղութիւնով, վորը հետևանք է խոտի ուշ հավաքման, անխնամ չորացման, վատ պահելուն և այլ աշխատանքների անկանոն կատարման:

Առանց բավականաչափ վորակով բարձր խոտապաշար ունենալու չի կարելի խոսել քիչ թե շատ ռացիոնալ անասնապահության մասին, այստեղից էլ միանգամայն պարզ է դառնում այն, վոր սոցիալիստական անասնապահության պրոբլեմը հաջող լուծել հիմնականում հնարավոր է կերի բազայի լայնացման միջոցով:

Այս գրքույկի նպատակն է, տեղերում աշխատող ազրոպերսոնալին, խորհրդատեսային և կոլտնտեսային արտադրական լայն ակտիվին ծանոթացնել կերաբույսերի տեսակներին հետ, միաժամանակ պարզել խոտի բերքահավաքի և նրա պահպանման (հավաքելը, չորացնելը, պահելը, փաստուունների դեմ պայքարելը) հետ կապված մի քանի խնդիրները:

Ա.ԲՍ. Ա.ԲՐԱ.ՀԱՄԹԱՆ

ԽՈՏԱՐՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սոտհարքները բաժանվում են յերկու հիմնական տեսակների՝ բնական և արհեստական: Բնական խոտհարքները մեր տնտեսության մեջ գրավում են խոշոր տեղ, վորովհետև ստացվող խոտի հիմնական մասն ստացվում է խոտհարքներից:

Բնական խոտհարքները մեր յերկրում գտնվելով՝ տարբեր ջրային, հողային և կլիմայական պայմաններում ու տարբեր բարձրութիւնների վրա (ծովի մակերևույթից), հիմնականում բաժանվում են 2 տիպի — լեռնա-տափաստանային և բարձր լեռնային (կամ յենթալպյան): Լեռնա-տափաստանային խոտհարքները՝ գտնվելով ծովի մակերևույթից 1600-ից մինչև 2200—2300 մետր բարձրության վրա, հայտնի յեն իրենց չոր և համեմատաբար ավելի տաք կլիմայով, լեռնա-սևահողային տեսակի հողերով և վորոշ քանակութիւնով տափաստանային բուսականության խոտուղ խոտակազմով (փետրախոտ, հազարաթերթուկ, վորոշ տեսակի կորնզաններ և այլն): Բարձր լեռնային կամ յենթալպյան խոտհարքները տարածվում են ծովի մակերևույթից 2000 մետր և վորոշ տեղերում մինչև 2500 մ. բարձրության վրա: Այսպեղ կլիման ավելի ցուրտ և խոնավ է: Հողերն իրենց կազմութիւնով գլխավորապես լեռնա-մարգագետնային են և մասամբ լեռնա-սևահող: Բուսականութիւնն այս խոտհարքներում բաղկացած է ամենաարժեքավոր բազմամյա բույսերից:

Լեռնա-տափաստանային խոտհարքներից ստացված խոտը լինում է շատ բարձրակարգ վորակի, վորովհետև գտնվելով գանադան թեքութիւնների և բլուրների վրա, ստանում է տարբեր չափով խոնավութիւն:

Սոտավութիւնով անատ խոտհարքներում գերակշռում են լավ տեսակի կերաբույսերը, իսկ սակավ խոնավ խոտհարքներում՝ ավելի քսերոֆիտ, քիչ աննդարար բույսերը:

Լեռնա-տափաստանային խոտհարքներում տարածված լավ խոտարույսերից են՝ չայիրը, դաշտավելը, կարմիր վարդազուն յերեքնուկը, վայրի կորնզանը, աւուլտոր և այլն: Իսկ վոչ ցան-

կալի, կամ ցածր վորակի խոտաբույսերից հայտնի յեն փետրա-
խոտը, փշավոր կորնդանները, կելերյան և այլն:

Սոտի վորակը պայմանավորվում է նրանով, թե խոտի կազ-
մում խոտաբույսի վոր տեսակն է գերակշռում: Լեռնա-տափաս-
տանային խոտհարքների խոտի կազմում բազմապիսի խոտա-
բույսերի տեսակների առկայութան հետևանքով, ստացվող խոտն
ընդհանրապես միջին վորակի յե լինում:

Բարձր-լեռնային (յենթալպյան) խոտհարքներից ստացվող
խոտն իր սննդարարութամբ մեծ մասամբ ամենաբարձր արժեքի
կեր է, գերազանցելով բոլոր տեսակի խոտերին՝ իր բուրմուռնքով
և կերային արժեքով: Պրոֆ. Ի. Ի. Կալուզինի կարծիքով յեն-
թալպյան խոտհարքներից ստացվող խոտն այնքան հարուստ է
սպիտակուցային նյութերով, վոր շատ քիչ բանով է տարբեր-
վում վորոշ տեսակի խոտացրած կերերից՝ թեփ և այլն: Յենթալ-
պյան խոտհարքներում շատ տարածված ամենաարժեքավոր կերա-
բույսերից են՝ վոզնախոտը, վիկաները, ցորենուկը, յերեքնուկ-
ների ամենալավ տեսակները, տիմոֆեյեվկան և այլն: Վորոշ
տեղերում գերակշռելով դրանց առանձին տեսակները, քաղիուց
հետո տալիս են համարյա թե ստացվող խոտի հիմնական մասը:
Այդ պատճառով յենթալպյան խոտհարքներից ստացված խոտը,
կարելի յե ասել, վորակով բարձր է լինում, վորտեղից էլ վոր նա
հավաքված լինի (թեքություններից, թե հարթություններից),
յեթե, ի հարկե, թունավոր բույսեր չկան մեջը: Նայած թե վոր
բույսերն են գերակշռում և ինչպիսի տեղ է ընկած այս կամ այն
խոտհարքը, դրա համաձայն էլ խոտհարքներից տարբեր քանա-
կով խոտ կստացվի:

Արհեստական խոտաբույսերի իրենցից ներկայացնում են միամ-
յա կամ բազմամյա խոտաբույսերի կուլտուրա: Արհեստական
խոտհարքներում իրենց մեծ սննդարարութամբ և ստացվող
բերքի քանակութամբ խոտազգիների և թիթեռնածաղիկների
ընտանիքին պատկանող և մեղ մոտ մշակվող բույսերից հայտնի
յեն՝ առվույտը, կորնդանը, վիկան, սուդանի խոտը, վորոշ չափով
կարմիր յերեքնուկը և տիմոֆեյեվկան: Արևմտյան Յիվրոպայում,
Ամերիկայում և Սորհրդային Ռուսաստանում, արհեստական մար-
գագետիներում ցանվում են ուրիշ շատ տեսակի բույսեր, վորոնց
մի քանի տեսակները (որինակ, մարգագետնային շյուզախոտ,
ժիտնյակ, անքիստ ցորենուկ և այլն) անպայման պետք է մշա-
կել նաև մեզանում: Արհեստական խոտհարքներն այն առավելու-

թյունն ունեն, վոր նրանցից մի տարվա ընթացքում կարելի յե
ստանալ մի քանի անգամ խոտի բերք, վորի քանակությունը,
լավ մշակելու դեպքում, 3—4 անգամ ավելի շատ կարող է լինել,
քան բնական խոտհարքից ստացվող խոտի բերքը: Արհեստական
խոտհարքներից ստացված կերաբույսն իր սննդարար արժեքով,
լավ հավաքելու և չորացնելու դեպքում, չի զիջի բնական խոտ-
հարքներից ստացված խոտին:

ԽՈՏԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Բնական խոտհարքներից ստացվող խոտը կազմված է չորս
հիմնական բուսաբանական խմբերից—խոտազգիներից կամ հա-
ցազգիներից:

Առաջին խմբի մեջ մտնում են խոտազգիները—Gramineae
ընտանիքին պատկանող բոլոր բույսերը, յերկրորդ խմբի մեջ
մտնում են այն բոլոր բույսերը, վորոնք պատկանում են թի-
թեռնածաղիկների—Leguminosae ընտանիքին, և այդ պատճառով
էլ կոչվում են թիթեռնածաղիկների կամ ընդեղենների բուսաբա-
նական խումբ, յերրորդը՝ այլախոտերի խումբն է, վորի մեջ
մտնում են մնացած բոլոր ընտանիքներից այն բույսերը, վորոնք
պատահում են խոտակազմի մեջ (բացի թունավոր և ֆլասակար
բույսերից), և վերջապես՝ չորրորդ խմբի մեջ են մտնում այն
բոլոր բույսերը, (առանց նկատի ունենալու, թե վոր ընտանիքին
են պատկանում դրանք), վորոնք թունավոր են ու մնասակար
անասունների համար:

Վերև հիշված բուսաբանական խմբերից խոտի վորակի տե-
սակետից ուշադրության արժանի յեն գլխավորապես առաջին
յերկու խմբերը, վորովհետև դրանցից կազմված խոտակազմից
ստացվում է ամենաբարձր արժեքի խոտ: Բացի դրանից, այլա-
խոտերի խմբի մեջ նույնպես մտնում են բույսեր, վորոնք սննդա-
բարության տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում,
բայց համեմատաբար ավելի քիչ, վորի հետևանքով այլախոտերի
խմբի մեջ գերակշռողը ցածր վորակի խոտերն են, այդ պատճա-
ռով էլ այդ խումբը պետք է հաշվել ցածր վորակի խոտ տվող:
Իսկ ինչ վերաբերում է թունավոր ու ֆլասակար բույսերի խմբ-
բին, կարելի յե ասել միայն, վոր նրա գոյությունը խոտակազմի
մեջ նույնիսկ քիչ չափով իջեցնում է խոտի վորակը, իսկ գերա-

կշռելու դեպքում՝ դառնում է անասուններին կերակրելու համար վտանգավոր:

Այդ բուսական խմբերը բնական մարդագետիներում խոտակազմի մեջ լինում են մի քանի տասնյակ բույսերի խառնուրդով, բայց մեծ մասամբ յուրաքանչյուր առանձին դեպքում խմբից վորեւ մեկը կամ մի քանիսը գերակշռում է մյուսին, թե իր քանակով և թե կանաչ մասսայով:

Պարզելով խոտի կազմում խոտաբույսից այս ու այն տեսակի գերակշռող քանակը, վոր խմբին պատկանելը ու այդ խմբերի արժեքը, մենք դրանով վորոշում ենք և խոտհարքի արժեքը: Շատ անգամ մեր բնական խոտհարքների մեջ պատահում են և այնպիսի խոտհարքներ, վորտեղ վոչ միայն գերակշռում են մի վորեւ խմբի բույսերը, այլև գերակշռող հանդիսանում է միայն մեկ կամ յերկու բույս, այդպիսի խիստ գերակշռող բույսերը լինում են գլխավորապես խոտազգիների և թիթեռնածաղիկների ընտանիքներին պատկանող բույսերը: շատ անգամ այնպիսի պատկեր է ստացվում, վոր կարծես այդ խոտհարքները արհեստականորեն վորոշ կերաբույսեր են ցանված:

Մտնրամասն կերպով ուսումնասիրելու և կամ ճշտորեն պարզելու համար, թե այս կամ այն տեսակի մարդագետիներում վոր տեսակի խոտաբույսերն են գերակշռում և ինչ չափով, գործընթացում ունի հետևյալ մեթոդը. մեկ քառակուսի մետր խոտհարքում գտնվող խոտը կտրվում է հատուկ մկրատով կամ դասակարգվում այն բարձրությամբ, ինչ բարձրության խոտահունձ մեքենան կամ գերանդին և կտրում, ստացված ամբողջ խոտը բաժանվում է հիշված խմբերի՝ կամ ինչպես ասում են առանձին ֆրակցիաների, ապա կշռելով առանձին-առանձին այդ ամբողջ խոտը, կարող ենք վորոշել այդ ֆրակցիաների համեմատությունը: Որինակ՝ յեթե մեկ քառակուսի մետրից ստացվում է 400 գրամ խոտ, վորից՝ 200 գրամ 1-ին խմբից, 100 գրամ 2-րդ խմբից և 50-ական գրամ 3-րդ ու 4-րդից է, ապա կստացվի հետևյալ պատկերը, վոր խոտազգիները ավյալ խոտհարքում կազմում են 50%₀, թիթեռնածաղիկները՝ 25%₀, այլախոտերը՝ 12,5%₀ և թունավոր ու մնասակար բույսերը՝ 12,5%₀:

Իսկ յեթե ցանկանում ենք իմանալ ստացվելիք բերքի քանակությունը, այդ դեպքում կտրում ենք փորձնական քառակուսի մետր խոտ մարդագետնի մի քանի տեղից, նայած թե ինչ տարածության վրա յենք ցանկանում պարզել: Յեթե խոտհարքը

մինչև մեկ հեկտար է, կարելի յե յերեք տեղից վերցնել, իսկ յեթե ավելին է, ապա պետք է վերցնել առնվազն 7—8 տեղից, այն էլ ամենատիպիկ տեղերից: Այդ խոտը չորացնելուց հետո կշռում ենք (ֆրակցիաների բաժանած, կամ ամբողջովին) և ապա մեկ քառակուսի մետրից ստացված խոտի միջին կշիռը բազմապատկում ենք խոտհարքի տարածության վրա (քառակուսի մետրով արտահայտված), այդպիսով ստանում ենք բերքի քանակությունը: Որինակ՝ յեթե միջին քաշը մեկ քառակուսի մետրից ստացվում է 400 գրամ խոտ, ապա բազմապատկելով 10-ը հազարով, կստացվի 4000 կիլոգրամ կամ 4 տոնն մեկ հեկտարից: Ի հարկե, այդ թիվը կլինի մոտավոր, վորովհետեւ ինչքան էլ աշխատենք այդ քառակուսի մետրները կարելի տիպիկ տեղերից, այնուամենայնիվ գործնականում վորոշ տարբերություն կարող է տար: Կերաբույսերի կուլտուրայով զբաղվելու կամ բնական խոտհարքներն ավելի լավ իմանալու համար բավական չէ միայն դիտենալ բուսական խմբերի մասին, այլ անհրաժեշտ է նայել մանրամասն ծանոթանալ առանձին բույսերի հետ, վորոնք պատահում են մարդագետիներում, վորպեսզի ցանկալի բույսերի համար ստեղծենք բարենպաստ պայմաններ, իսկ թունավոր և վնասակար բույսերի դեմ պայքար կազմակերպենք, առանց վորի մենք խոտի վորակը վորոշելիս և տնտեսության համար կերի բալանսը կազմելիս միշտ կարող ենք սխալվել: Հենց այդ նկատառումներով մենք ներքեկում ավելի մանրամասն կանգ կառնենք առանձին բույսերի վրա, վորոնք շատ են պատահում մարդագետիներին խոտակազմի մեջ և վորոնք մտցված են մշակության մեջ, կամ թե մեր կարծիքով հետադայում անպայման պետք է մտցվեն:

1. ԿԵՐԱՅԻՆ ԽՈՏԱԶԳԻՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ

Մարդագետիներում խոտազգիների ընտանիքի բույսերն ամենատարածվածներն են. նրանք պատահում են հարթավայրերից մինչև բարձր լեռները, միշտ խոտակազմի մեջ զբաղվելով խոշոր տեղ, իսկ վորոշ տեղերում մինչև 70—80%₀: Բոլոր խոտազգիների ընտանիքի բույսերն ունեն փնջածվ արմատներ, վորոնք հողի մեջ շատ խոր չեն տարածվում: Ցողունները լինում են ուղիղ կամ ծնկաձև, վեր բարձրացող, իսկ մեջը դատարկ (սնամեջ): Տերևները լինում են յերկար, նեղ ու գծաձև:

Մարդագետնային խոտազգիները, հակառակ կուլտուրական

խոտազգիներէ, լինում են մեծ մասամբ բազմամյա. նրանք ընդունակ են հիմքերի մոտ թփակալվելու և անընդհատ նորանոր ցողուններ տալու: Ըստ թփակալման ձեւերի տարբերվում են յերեք տեսակի խոտազգիներ, վորոնք սերտ կերպով կապված են լինում մարզագետինների զարգացման տարբեր ստադիաների հետ:

Ա) ԿՈՃՂԱՐՄԱՍԱՅԻՆ ՏԻՊԻ ԽՈՏԱԶԳԻՆԵՐ

Այս տիպի խոտազգիները զարգացման հենց առաջին տարվանից տալիս են շատ յերկար ստորերկրյա ցողուններ (կոճղարմատներ), հողի մակերեսին հորիզոնական կերպով տարածվելով: Այդ կոճղարմատների միջոցով այս տիպի բույսերը կարճ ժամանակամիջոցում գրավում են մեծ տարածութուններ, բարենպաստ պայմաններում այնպես շատ են զարգանում, վոր համաբայ թե մյուս բոլոր տեսակի բույսերին դուրս են վանում ավայլ հողամասից: Դրանցից են՝ սողացող չալիբը՝ աղվեսապոչը, անքիստ ցորենուկը:

Բ) ՅԱՆՅԱՌԱՓՈՒՄԻՆ ՏԻՊԻ ԽՈՏԱԶԳԻՆԵՐ

Այս տիպի խոտազգիների մոտ թփակալումը կատարվում է հողի միջից, դուրս գալով աղեղնաձեւ նոր ցողունների (կամ կողային ընձյուղների) միջոցով: Կողային ընձյուղները դուրս են գալիս 90 աստիճանից պակաս անկյունի տակ և դասավորվում են իրարից հեռու, վորոշ տարածութւյան վրա, տալով ավելի նոսր ճիւղեր: Այս տիպի բույսերը կարողանում են աճել ավելի ամուր հողերում, քան թե կոճղարմատավոր տիպի խոտազգիները: Դրանց ներկայութունը մարզագետիններում ցույց են տալիս, վոր խոտհարքները բարելավման ավելի քիչ կարիք են զգում: Յանյառաթփային տիպի խոտազգիներին են պատկանում ամենաարժեքավոր մարզագետնային խոտազգիները՝ մարզագետնային շուղախոտը, տիմոֆեյեվկան, ուղիղ ցորենուկը, վորդախոտը և ուրիշները:

Գ) ԽՍԱՌՓԱՅԻՆ ՏԻՊԻ ԽՈՏԱԶԳԻՆԵՐ

Այս տիպի խոտազգիներին մոտ թփակալումը կատարվում է հողի տակ: Կողային ընձյուղները դուրս են գալիս շատ փոքր անկյան տակ և դասավորվում իրար կողքի, շատ խիտ կերպով:

այդ պատճառով դրանցից ստացվում են շատ ճիւղեր: Խոտազգիներ տիպի խոտազգիները կարողանում են աճել ամենածանր և ամենախիտ հողերում, վորտեղ չեն կարողանում աճել մյուս յերկու տիպի խոտազգիները: Այս տիպի խոտազգիները ցանկալի չեն համարվում, վորովհետև մի կողմից, խոտն ստացվում է վատ վորակի, և անասունները դժվարանում են ուտել կամ բալորովին չեն ուտում, մյուս կողմից՝ մարզագետիններում զրանցից մեծ չափով գոյութւյն ունենալը ցույց է տալիս մարզագետինների ծերացմանը շրջանը: Դրանցից են, որինակ՝ փետրախոտը, կոշտ շուղախոտը, վոչխարի շուղախոտը, սպիտակ մորուքը (բելուս) և այլն:

Խոտազգիները տարբերվում են իրարից նաև ցողունի վրա տեղիներին դասավորումով: Խոտազգիների մի մասի մոտ տեղիները ցողունների վրա չեն լինում, կամ թե լինում են քիչ (վորոշ մասը), տեղիների հիմնական մասը լինում է դասավորված ցողունների հիմքի մասերում. այդպիսի խոտազգիները կոչվում են ներհնաղիլ խոտազգիներ, իսկ այդ խոտազգիներով զբաղեցրած մարզագետիններն ոգտագործվում են վորպես արոտատեղիներ, քանի վոր քաղելու ժամանակ տեղիները դժվար են լինում հավաքել, բացի այդ, ստացված խոտն—առանց տեղիների, վորակով շատ ցածր կարող են լինել, իսկ մնացած խոտազգիների մոտ տեղիների հիմնական մասը հավասարաչափ դասավորված են լինում ցողունների վրա և կոչվում են վերաղիլ խոտազգիներ: Նման խոտազգիներով ծածկված արոտավայրերն ոգտագործվում են վորպես խոտհարքներ:

Խոտազգիներն իրենց ծաղկելու ժամանակի տեսակետից նույնպես տարբերվում են իրարից, ստորաբաժանվելով յերեք տեսակների, առաջին՝ վաղ ծաղկողները, սրանք ծաղկում են հենց վեգետացիոն շրջանի սկզբից և այդպիսի խոտհարքները քաղվում են արդեն մայիսի վերջերից: Յերկրորդ՝ միջին տեսակի, վորոնք ծաղկում են ամառվա կեսին և այդպիսի խոտազգիներով ծածկված խոտհարքների քաղը կատարվում է հունիս ամսից վոչ շուտ, և յերրորդ՝ ուշ ծաղկողներ, վորոնք ծաղկում են միայն ամառվա վերջերին և քաղը կատարվում է շատ ուշ:


Վերջին խոտազգիները տարբերվում են իրարից նաև հասունացման արագութւյան տեսակետից: Կան խոտազգիներ, վորոնք ցանկելու կամ ծլելու հենց առաջին տարվանից տալիս են բավականաչափ բերք. դրանք կոչվում են արագ հասունացողներ, իսկ

դրա հակառակը՝ դառնադ իստունացողները նրանք են, վորոնք նորմալ բերք են տալիս ցանելուց միայն յերեք-չորս տարի հետո:

Ներքեվում մենք կնկարագրենք մի շարք կարելիոր խոտազգիները, վորոնք կամ ցանվում են, կամ թե բնական մարգագետիններում հաճախ աճում են վորպես գերակշռող բույսեր:

ՍՈՂԱՅՈՂ ՉԱՅԻՐ—Agropyrum repens

Բազմամյա կոճղարմատավոր տիպի խոտազգիներին պատկանող կերարույս է: Յերկար կոճղարմատները հողի տակ սարածում են հորիզոնական ձևով: Չարգացման առաջին տարում սողացող չափերը թույլ են աճում և քիչ բերք են տալիս, վորովհետև ամբողջ եներգիան տալիս են կոճղարմատների զարգացմանը, իսկ




Նկ. 1. Սողացող չայիր

արդեն յերկրորդ տարվանից այնպես են զարգանում, վոր բռնում են ամբողջ հողամասը, դուրս վանելով մյուս բոլոր բույսերին: Չայրի ցողուններն ուղիղ են և խիտ սերելավորված: Մշակութան մեջ չայիրը ցանվում է մաքուր վիճակում, տարեկան տալով յերկու, նույնիսկ յերեք բերք (հունձ): մեկ հեկտարից կարելի յե ստանալ 12-20 ցենտներ չոր խոտ: Յերկարամյա բույս է: Վայրի վիճակում սողացող չայիրը պատահում է սկսած հարթավայրերից մինչև լեռնատափաստանային մարգագետիններում: Ճալիս է լավ սննդարար խոտ, մանավանդ ձիերի և մասամբ էլ վոչխարների համար:

ԱՆՔԻՍ ՅՈՐԵՆՈՒԿ—Bormus inersmis

Կոճղարմատավոր տիպի, ուժեղ սերելավորված ցողուններով, բազմամյա խոտազգի յե: Ճալիս է յերկար կոճղարմատներ և շատ լավ աճում է փուխը, սննդարար նյութերով հարուստ հողերում: Յրտին և խոնավության շատ լավ դիմանում է, աճում է նաև չափազանց պոստ խոնավություն ունեցող հողերում: Մշակության մեջ այս բույսն ընդունված է այն պատճառով, վոր տալիս է առնվազն յերկու բերք տարեկան, այն էլ լավ վորակի: Մեկ հեկտարից ստացվում է մինչև 30 ցենտներ չոր խոտ: Անքիստ ցորենուկը նույնպես յերկարամյա բույս է. մեկ անգամ ցանելուց մնում է խոտակազմի մեջ մինչև 15-17 տարի: Վայրի վիճակում պատահում է մինչև 2000 մետր բարձրություն ունեցող մեր մարգագետիններում:



Նկ. 2. Անքիս ցորենուկ

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ԴԱՃՏԱՎԵԼ—Poa pratensis

Կարճ կոճղարմատներով, ցածրադիր բազմամյա խոտազգի յե: Ցողունները բարակ են և քիչ սերելավորված: Աճում է շատ դանդաղ. նորմալ բերքն առաջին անգամ տալիս է միայն յերեք տարուց հետո: Կլիմայի նկատմամբ շատ քիչ է պահանջլոտ, այդ պատճառով խոտակազմի մեջ մնում է շատ յերկար տարիներ: Լավ է աճում սննդարար նյութերով հարուստ հողերում: Անջրդի պայմաններում մեկ հեկտարից տալիս է մինչև 20 ցենտներ չոր խոտ, իսկ ջրելու դեպքում բերքը կարող է կրկնապատկվել: Սըտացվող խոտը շատ նուրբ է և կերային արժեքը բարձր: Վայրի վիճակում մարգագետնային դաշտավելը պատահում է բոլոր լեռնային մարգագետիններում, հասնելով մինչև յենթալպյան զոնան:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ՇՅՈՒՂԱԽՈՏ—Festuco pratensis

Բազմամյա խոտազգի յե: Յողունները տափակ են և յերկար, մինչև 100 սմ. բարձրության: Տերեվները շատ են և յերկար, միջին լայնությամբ: Մարգագետնային շյուղախոտը լավ է աճում խոնավ հողերում: Ծաղկում է ամառվա կեսերին. ծաղկման շրջանում քաղելու դեպքում կարելի յե ստանալ նաև յերկրորդ բերքը, վորովհետև արագ կերպով նորից տալիս է նորանոր ցողուններ և տերեվներ: Մեկ հեկտարից ստացվում է 18—25 ցենտներ չոր խոտ. ստացվող խոտն իր կերային արժեքով շատ բարձր է, դրա համար ել պատկանում է առաջին կարգի խոտաբույսերին: Մշակության մեջ շատ յերկար տարիներ չի մնում. ամենաշատը կարող է մնալ մինչև 7 տարի: Վայրի վիճակում շատ տեղերում է պատահում, բայց հատկապես տարածված է միջին լեռնային գոտում, վորը բարենպաստ պայմաններում խոտակազմի մեջ գերակշռոյն է հանդիսանում:

ՄԱՐԳԱԳԵՏՆԱՅԻՆ ՏԻՄՈՓԵՅԵՎԿԱ.—Phleum pratense

Յերկար ցողուններով (100—120 սմ.) բազմամյա ցանցառաթփային տիպի խոտազգի յե: Յողունները շատ խիտ կերպով տերեվավորված են, այդ պատճառով ել տալիս են մեծ մասսա: Տիմոֆեյեվկան կլիմայի նկատմամբ պահանջկոտ չէ, բայց գերադասում է խոնավ տեղերը: Տիմոֆեյեվկան լավ աճում է ավազոտ և կավային հողերում: Ուշ հասունացող է (ոգոստոսի վերջին) և այդ պատճառով տալիս է միայն մեկ բերք (հունձ): Մեկ հեկտար տիմոֆեյեվկայի ցանքից կարելի յե ստանալ մինչև 25—35 ցենտներ չոր խոտ: Յերկամյա չէ, խոտակազմի մեջ մնում է 6—7 տարի: Մշակության մեջ տարածված է շատ վաղուց: Մեզ մոտ նույնպես վորոշ տեղերում կատարվում է տիմոֆեյեվկայի ցանքը, իսկ վայրի վիճակում շատ է պատահում մեր մարգագետնային գոտու խոնավ տեղերում:



Նկ. 3. Տիմոֆեյեվկա

ՎՈՂՆԱԽՈՏ—Dactylis glomerata

Վողնախոտը նույնպես ցանցառաթփային տիպի բազմամյա խոտաբույս է: Յողունները շատ յերկար են, բարձրությունը հասնում է մինչև 1,5 մետրի, խիտ տերեվավորված և ուղղաձիգ կանգնած: Աճում է շատ դանդաղ և միայն յերրորդ տարվանից է տալիս նորմալ բերք: Միջում է սննդարար նյութերով հարուստ հողերը: Ծաղկում է ամառվա կեսերին և յերկրորդ քաղին տալիս է բավականաչափ կանաչ մասսա: Այդ յերկու հնձից մեկ հեկտարը տալիս է 30—40 ցենտներ չոր խոտ: Ժամանակին վողնախոտը հավաքելու դեպքում, կսացվի սննդարար նյութերով հարուստ խոտ, իսկ ուշ հավաքելու դեպքում, կորցնում է տերեվների զգալի մասը: Մեկ անգամ ցանկուց հետո վողնախոտը մշակության մեջ բերք է տալիս մինչև 10 տարի: Վայրի վիճակում վողնախոտը տարածված է ամեն տեղ՝ հարթավայրերից մինչև ալպյան գոտին, շատ տեղերում ցանքսերի մեջ պատահում է վորպես մուխոտ:



Նկ. 3.

ՍՈՒԳԱՆԻ ԽՈՏ—Sorghum halepense

Սուգանի խոտը պատկանում է միամյա ցանովի խոտազգիներին: Յողունները բարձր են լինում մինչև 2 մետր և շատ տերեվավորված: Բարենպաստ պայմաններում շատ խիտ է թփակվում, այնպես վոր մեկ ծլած սերմից տալիս է 50—100 ցո-

դուռնով թուփ: Մուգանի խոտը հողի նկատմամբ պահանջկոտ չէ, բայց գերադասում է ավազա-կավային սեփահողերը: Դսերոֆիտ բույս է և պահանջում է մեծ քանակությամբ ջերմություն: Տարեկան ստացվում է սովորաբար յերկու բերք (քաղ), բայց լավ պայմաններում տալիս է յերեք, և նույնիսկ չորս (քաղ): մեկ հեկտարից կարելի յե ստանալ 50—80 ցենտներ չոր խոտ: Մենդարպը արժեքը բարձր է. քանի վոր պարունակում է բոլոր խոտազգիներից ավելի պրոտեյին (սպիտակուց): Մուգանի մշակութունը մեզ մոտ նոր է, բայց առանց կասկածի կարելի յե ասել, վոր հետագայում մեր շրջանների համար հանդիսանալու յե բոլոր ցանովի խոտաբույսերի մեջ հիմնական կուլտուրան:

2. ԿԵՐԱՅԻՆ ԹԻԹԵՌՆԱՇԱՂԻԿՆԵՐ (ԸՆԳԵՂԵՆՆԵՐ)

Սոտազգիներից հետո թիթեռնածաղիկները կերարույսերի շարքում գրավում են առաջին տեղը, բայց թիթեռնածաղիկները խոտազգիներից ավելի հարուստ են սպիտակուցային նյութերով, այդ պատճառով ել դրանք առաջին տեղն են գրավում բոլոր կերարույսերի մեջ իրենց կերային արժեքով:



Նկ. 4. Վոզնայս

Թիթեռնածաղիկներին պատկանող կերարույսերի հիմնական հատկանիշները հետևյալներն են: Դրանք գլխավորապես բազմամյա խոտաբույսեր են. արմատներն իլկաձև, հողի մեջ շատ խորն են մտնում, հասնելով մինչև 15 մետրի: Արմատները շատ են ճյուղավորվում. արմատային ծաղիկների վրա լինում են փոքրիկ ասեղի գնդի չափ ուռուցքներ (պալարիկներ), վորոնց մեջ բնակվելով հատուկ տեսակի բակտերիաները, կարողանում են յուրացնել ուղի մեջ յեղած ազատ ազոտը և այդ պատճառով թիթեռնածաղիկներին պատկանող կերարույսերը վոչ միայն

շատ լավ աճում են ազոտով աղքատ հողերում, այլ և հարստացնում են հողն ազոտով: Թիթեռնածաղիկ բույսերի-ցողունները լինում են շատ տարբեր տեսակի. վորոշ տեսակի ցողուններն ուղիղ են, մյուս-


ներինը մազլցող, փաթաթվող և այլն: Տերեկները լինում են մեծ մասամբ բարդ փետրաձև, կամ բարդ յերեքական, շատ քչերն են ունենում ավարդակա տերեկներ: Ծաղիկները հավաքված են լինում գլխիկ կամ վողկույզ ծաղկաթիթուխներով, բացի վորոշ տեսակներից, վորոնց ծաղիկները լինում են մեկական տերեկավածոցերում: Ծաղիկների կազմութունը շատ նման է նստած թիթեռի, այդ պատճառով ել կոչվում են թիթեռնածաղիկ: Պտուղները կազմված են յերկու բացվող փեղկերից (հասունանալուց հետո) և մեկ կամ միքանի սերմերից. դրանք կոչվում են ունդ, (դրա համար ել վումանք գործ են անում ընդդեմներ բառը):

Թիթեռնածաղիկների (ընդդեմների) ընտանիքին պատկանող շատ կերարույսեր մշակութային մեջ են մտած շատ վաղուց: Առվույտը և կորնգանը մեզնում շատ հնուց է յեղել տարածված Չանդեղուրում և Դարալագյաղում: Ինչ վերաբերում է այդ ընտանիքից մյուս կերարույսերին, պետք է ասել, վոր նրանցից շատերը ուրիշ տեղեր թեպետ մշակվում են, բայց մեզ մոտ դեռ մուտք չեն դործել կամ թե գտնվում են փորձական շրջանում: Մենք ներքևում կխոսենք վորոշ թիթեռնածաղիկ բույսերի մասին, վորոնք վայրի վիճակում բնական մարդագետիկների խոտակազմի մեջ վորոշ տեղերում մեծ դեր են խաղում և դրանք անկասկած պետք է վայրի վիճակից մշակութային մեջ մտցնել՝ սերմերը հավաքելու միջոցով:

4680
39

ԱՌՎՈՐԱԿԱՆ ԱՌՎՈՒՅՏ—Medicago sativa

Առվույտը բազմամյա և խիստ թփակալվող կերարույս է: Ցողունները յերկար են, ուժեղ տերևավորված, շատ անգամ փրվող: Տերեկները մանր են—բարդ յերեքական: Ծաղիկները մանր են և մանիշակագույն: Պտուղը խիռնջաձև, վորոքված բազմա սերմավոր ունդ է: Առվույտի արմատները շատ յերկար են լինում և կարող են հասնել մինչև 15 մետր խորութայն, վորով և պաշտպանվում է չորութունների ժամանակ: Առվույտը լինելով տաք յերկրի բույս, բարենպաստ պայմաններում և ջրելու դեպքում տալիս է 4—5 քաղ (բերք) և տաքեկան բերքը մեկ հեկտարից հասնում է 100—150 ցենտներին, իսկ ընդհանրապես միջին նորմալ բերքը կարելի յե հաշվել 50—60 ցենտներ չոր խոտ: Առվույտի ցանքսի համար շատ համապատասխան են ավազա-կավային կամ կավ-վազային հողերը, վորոնք քիչ



կիր են պարունակում: Առվույտը շատ յերկարամյա բույս է մի ցանքսը մինչև 15 տարի բերք է տալիս:

Սովորական առվույտի վայրի տեսակները շատ են տարածված մեր չոր, կիսա-անապատային ձմեռային արոտներում յեղ լեռնա-տափաստանային մարգագետիններում, չոր քարքարոտ տեղերում, լեռնային մարգագետիններում, վորոնք յերբեմն հասնում են մինչև 2300—2400 մետր բարձրության (ծովի մակերեվույթից):



Նկ. 5. Սուդանի խոս

ները (Հոռի, Նոր-Ֆայագետ, Լենինական և այլն), նույնպես ապահովվեն առվույտի խոտի ձմեռային կերի բաղադրով:

Կ Ո Ր Ն Գ Ա Ն — Onobrychis sativa

Կորնզանը յերկար, կոշտ ցողուններով բազմամյա կերաբույս է: Տերևները շատ են, բարդ-փետրաձև: Ծաղիկները խոշոր են, վարդագույն կարմիր և սովորաբար հավաքված են լինում վողկույզ ծաղկափթթույթյուններով: Արմատն առանցքավոր է և շատ խորը գնացող: Կորնզանն աճում է չոր, քարքարոտ, կրային հողերում: Բերք տալիս է տարեկան չոր տեղերում միայն մեկ իսկ ջրելու դեպքում 2 և ավելի անգամ. մեկ քաղից ստացված բերքը հեկտարից հասնում է 25—30 ցենտներին: Ստացվող խոտի աննդարար արժեքը՝ ժամանակին քաղելու դեպքում, համարվում

է միջին կամ միջինից բարձր: Կորնզանը շատ յերկարամյա բույս է: Մեկ անգամ ցանելուց կարող է մնալ խոտակազմի մեջ 15—20 տարի անընդհատ: Կորնզանի գլխավոր առավելութունը նա յե, վոր նա հողից և կլիմայից քիչ պահանջներ ունի, դրա համար էլ կարող է ամեն տեսակ հողում աճել: Վերոհիշյալ պատճառով և խոշոր բերք տալու հատկությամբ կորնզանը մոտ ապագայում մեծ դեր ունի խաղալու սոցիալիստական անասնապահության զարգացման գործում: Կորնզանի վայրի տեսակները շատ են տարածված մեր մարգագետիններում, գլխավորապես չոր տեղերում. դրանք՝ վորոշ խոտհարքներում կազմելով խոտակազմի զգալի մասը, լավացնում են ստացվող բերքի վորակը և բարձրացնում քանակը: Վայրի կորնզանները նույնիսկ խոնավ վիճակում անասուններն ուտելուց վորոուուցք (տիմպանետ) հիվանդություն չեն ստանում:



Նկ. 6. Սովորական առվույս

ԿԱՐՄԻ ՅԵՐԵՔՆՈՒԿ

Բազմամյա, բազմաթիվ աղեղնաձև բարձրացող ցողուններով կերաբույս է: Արմատներն իլիկաձև են և հողի մեջ խորը գնացող: Տերևները խոշոր են և յերեքական, բարդ: Ծաղիկները շատ մանր են, հավաքված վոչ մեծ ծաղկափթթույթյուններով, նարնջի և կարմիր գույնով: Կարմիր յերեքնուկի ցանքս կատարելու համար ամենահարմար հողը ավազա-կավային հարուստ տեսակի հողն է, մանավանդ յեթե նա խոնավ է: Կարմիր յերեքնուկը տալիս է 1—2 բերք, մեկ հեկտարից 20—30 ցենտներ: Սոտը լինում է շատ նուրբ և սննդարար արժեքով բարձր: Շատ յերկարամյա չէ, ցանելուց հետո խոտակազմի մեջ մնում է միայն 4—5 տարի: Վայրի վիճակում կարմիր յերեքնուկը մեղմում պատահում է գլխավորապես լեռնային մարգագետիններում

բայց բարձր արոտներում համարյա թե չի աճում: Վորոշ չափով լինում է նաև տափաստաններում: Խոտակազմի մեջ գերակշռելու դեպքում բնական խոտհարքները տալիս են վոշ միայն շատ քանակությամբ խոտ, այլև ստացված խոտը բավականին բարձր կերակրին արժեք է ունենում: Կարմիր յերեքնուկը կարելի յի առաջարկել վորպես լավ կուլտուրական բույս նաև մեր ցուրտ շրջաններին համար, վորտեղ առայժմս առվույտի կուլտուրան դժվար է զարգանում:

ՄԵՂՐԱՆԻԹԱՍ (ԻՇԻ ՅՈՒՋԱ)

Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող միամյա կամ յերկամյա խոտաբույս է: Յողունները հասնում են մինչև 1,5—2 մետր բարձրության և խիստ տերևավորված են: Տերևները մանր են և յերեքական: Ծաղիկները դեղին գույնի յեն, մանր և հավաքված են լինում յերկար վողկույզ ծաղկափթթույթյուններով: Մեր պայմաններում մեղրալուծասը պատահում է գլխավորապես վորպես մոլխոտ կուլտուրական ցանքսերում և յելահողմաս երում, տափաստաններից մինչև միջին լեռնային գոտին: Մեղրալուծասին հայրենիքը համարվում է Ամերիկան, վորտեղ մինչև այսօր ել սրա ցանքսերը գրավում են հարյուր հազարավոր հեկտար տարածություններ: Մեղրալուծասը կանաչ վիճակում շատ սուր հոտ է



Նկ. 7. Կորեգան

արձակում, վորը հետևանք է նրա մեջ յեղած կուլմարին նյութի:

վորի պատճառով սկզբում անասունները խուսափում են այդ բույսն ուտելուց: Բայց յեթե չոր խոտի մեջ վորոշ քանակությամբ խառնվում է մեղրալուծաս, այդ ժամանակ ամբողջ խոտն ստանում է դյուրեկան բուրմունք և անասունները մեծ հաճույքով են ուտում այդ խոտը: Մշակույթում մեղրալուծասը մեկ հեկտարից տալիս է մինչև 60—70 ցենտներ չոր խոտ: Մեղրալուծասը սննդարարության տեսակետից քիչ է զիջում մյուս թիթեռնածաղիկ կերբույսերին: Սրա կուլտուրայի տարածելը մեղնում մոտակա տարիներին խնդիր պետք է լինի:

Վ Ի Կ Ա — V i c i a

Վիկաները մեղնում մի քանի տեսակի յեն. դրանց մի մասը միամյա յե, մյուսները բազմամյա: Յողունները մեծ մասամբ վեր բարձրացող են և հատուկ մասերի միջոցով փաթաթվում են կամ մազլցում ուրիշ բույսերի: Տերևները նուրբ են և կազմված մի քանի գույզ փոքրիկ տերևներից, վորոնց ծայրերին կան փոքրիկ փաթաթվող մասեր (բեխիկներ): Արմատը թեպետ առանցքավոր է, բայց հողի մեջ շատ խորը չի գնում: Ծաղիկները հավաքված են լինում կամ վողկույզ ծաղկափթթույթյուններով կամ թե լինում են միայնակ տերեվածոցերում: Ծաղիկները մեծ մասամբ մանիշակագույն են: Վիկան լավ է



Նկ. 8. Մեղրալուծաս

աճում կավա-ավազային և կավային խոնավ հողերում: Մեկ հեկտարից ստացվում է 25—35 ցենտներ չոր խոտ: Սննդարարության տեսակետից վիկան բավականին բարձր արժեքի խոտ է տալիս:

Վիկայի կուլտուրան ընդունված է նաև խառնուրդով ցանել-
որինակ՝ վարսակի հետ. այդ դեպքում վիկան փաթաթվում է
վարսակին և ավելի շատ բերք է ստացվում, այն էլ բարձր սննդար-
ժեքով: Վիկան վայրի վիճակում շատ է պատահում բնական
մարգագետիններում, թե խոտհարքներում և թե արոտներում-
Պրա վորոշ տեսակները շատ են լինում ցորենի և դարու ցանքսե-
րում վորպես մոլախոտեր (այդ մոլախոտերին գյուղացիներն ան-
վանում են «գլուլ»), այդ «գլուլ»-ը մաքուր վիճակում ցանելու
դեպքում կստացվի բարձր արժեքի խոտ:

ԿԵՐԱՅԻՆ ԱՅԼԱԽՈՏԵՐԸ

Բացի խոտազգիների և թիթեռնածաղիկների ընտանիքին
պատկանող բույսերից, մյուս վորևե այլ բուսական ընտանիքից
համարյա թե չկան այնպիսի բույսեր, վորոնք մշակվելիս
լինեն չոր խոտ ստանալու նպատակով անասնապահության
համար: Բայց բնական մարգագետիններում այլախոտերը շատ
խոտհարքներում գերակշռելով, խոտակազմի մեջ տալիս են չոր
խոտի հիմնական մասը: Կերային արժեքի տեսակետից դրանցից
շատերն ունեն մեծ նշանակություն, վորովհետև նրանց քանա-
կից է կախված խոտի վորակը: Այլախոտերի ազդեցությունը
խոտի վրա շատ տարբեր է. նրանցից վորմանք նույնիսկ լավաց-
նում են վատ խոտի վորակը. նույնիսկ վորոշ տեսակները, ուժեղ
բուրմունքի հետևանքով, խոտի մեջ անգամ քիչ քանակությամբ
պարունակելու դեպքում, անասունների համար խոտը դարձնում
են չափազանց հաճելի ուտելու կոպիտ կեր:

Բայց նույն խմբի բույսերից շատ շատերը կազմում են
մոլախոտեր և ունենում են թունավոր ու վնասակար ազդեցու-
թյուն անասունների վրա: Դրանց են պատկանում կոշտ և քիչ
սննդարար խոտերը, վորոնց վրա շատ հաճախ լինում են կոշտ
մազեր, փշեր ու կեռեր, պարագիտ և կիսապարագիտ բույսեր
և այլն:


Ստատակազմի մեջ գրավելով վորոշ տեղ, դրանք ազդում են
ստացվող խոտի վորակի վրա, ինչպես և պակասեցնում են մար-
գագետնի բերքատվությունը: Աճելով մարգագետիններում՝ յեր-
բեմն դրանք ի հաշիվ ցանկալի կերբուրյան լավ զարգանում են
այնտեղ: Վնասակար այլախոտերը նպաստում են վորոշ անկային
հիվանդությունների տարածմանը և դրանով իսկ ամբողջ խոտը

դարձնում վնասակար: Այլախոտերն ավելի լավ են դիմանում
անբարենպաստ պայմաններում, նրանց սերմերը յերկար ժամա-
նակ չեն կորցնում ծլունակությունը:

Ավելի պարզ լինելու համար մենք կանդ կառնենք դրանցից
գլխավորների վրա:

ՆԱՉԱՐԱԹԵՐԹՈՒԿ—Achillea

Բազմամյա բարդածաղիկների ընտանիքին պատկանող խո-
տարույս է: Յողուններն ուղիղ են և կոպիտ տերևավորված,
ցողունների բարձրությունը հասնում է մինչև 80 սանտիմետրի:
Տերևները կտրված են բարակ դձային մասերի: Ծաղիկները մանր
են, սպիտակ կամ դեղին գույ-
նի և հավաքված են հովանո-
ցանման ծաղկափթթոնթյունե-
րում: Արմատներն ատանցքա-
վոր են. ունենում են նաև
ստորյերկրյա ընձյուղներ: Վայ-
րի վիճակում տարածված է
գլխավորապես լեռնային մար-
գագետիններում (պատահում
են նաև հարթավայրերում).
հողի և կլիմայի նկատմամբ
քիչ է պահանջկոտ. լավ դի-
մանում է չորության, շոգե-
րին և ցրտերին: Յերկարամյա
բույս է. քաղելուց հետո նո-
րից է աճում: Տալիս է քիչ կո-
պիտ, բայց սննդարար կեր:
Շնորհիվ այն հանգամանքի,
վոր իր մեջ պարունակում է
վորոշ յեթեբային ճարպեր,



Նկ. 9. Վ. ի կ ա

մաքուր վիճակում անասունները վատ են ուտում՝ իսկ խառ-
նուրդով լավ են ուտում: Արևմտյան Յեվրոպայում հազարա-
թերթուկը մտցված է մշակության մեջ ինչպես մաքուր, նույն-
պես և խառնուրդ վիճակում. մշակության մեջ տալիս է տարեկան
1—2 քաղ (բերք), մեկ հեկտարից տալով մինչև 15 ցենտներ չոր
խոտ:

Ս Ի Ն Չ — Tragopogon

Սինձը նույնպես պատկանում է բարդածաղիկների ընտանիքին: Յացրահասակ (50—60 սանտ.) բույս է: Տերևները նեղ նշտարաձև են, վերևից նեղ, հիմքում լայնանում են: Ծաղիկները հավաքված են դամբուլաձևի ծաղկափթիթուլային ծողունների մեջ պարունակում է սպիտակ կաթնային հյութ, վորը դուրս է գալիս ցողունները կտրելիս:

Սինձը պատահում է մեղ մոտ միայն վայրի վիճակում միջին լեռնային գոտում, գլխավորապես խոտհարքներում: Հողի և կլիմայի նկատմամբ շատ պահանջկոտ է, միայն չի սիրում ճահճացած տեղերը: Սինձն անասունների համար շատ հաճելի կեր է, ինչպես թարմ վիճակում, այնպես էլ չոր խոտի մեջ յեղած ժամանակ: Քաղեղուց հետո արագ կերպով աճում է: Սինձը մշակութային մեջ մինչև այժմ հայտնի է, բայց արդեն կատարվում են փորձնական աշխատանքներ այդ ուղղութիամբ և հավանական է արդյունքները կլինեն դրական:

ՍԵՎԱՏԵՍՈՒԿ—Pimpinella

Հովանոցավորների ընտանիքին պատկանող բազմամյա-բույս է: Ստորերկրյա արմատային սխտեմը շատ զարդացած է: Ցողուններն ուղիղ են, գլանաձև, մինչև 40 սանտ. բարձրությամբ: Տերևները յերկու տեսակ են լինում. ցողունի վրա դասավորված են փետրաձև տերևները, իսկ ցողունի հիմքում՝ ատամնավոր տերևները: Ծաղիկները շատ մանր են, սպիտակ կամ վարդագույն ու հավաքված են հովանոց ծաղկափթիթուլային ծողուններով: Իանդադ հասունացող է, ծաղկում է միայն հուլիս, ոգոստոսին: Մեղ մոտ այս բույսը նույնպես պատահում է, միայն վայրի վիճակում, գլխավորապես չոր կրային հողերի վրա: Յրտերին և չորութուններին լավ է զիմանում: Ստատկազմի մեջ յեղած ժամանակ քաղեղուց հետո նորից լավ աճում է: Սեվատեսուկ բույսը անասուններն ուտում են թե թարմ և թե չոր վիճակում: Մշակութային մեջ չի մտցված:

ՀԱՎԱԳՎԱԾ ՉԱՆԳԱԳԻԿ—Campanula glomorata

Չանգագիկների ընտանիքից բազմամյա բույս է. ցողուններն ուղիղ են, մինչև 60 սանտ. բարձրությամբ: Ծաղիկները հավաքված են գլխիկներով բույսի գագաթում կամ տերևածոցերում: Ցողունները և տերևները բավականին կոպիտ են և ծածկված են սագմղուկներով: Վայրի վիճակում մեղ մոտ պատահում է գլխավորապես միջին և բարձր լեռնային գոտիներում, ինչպես խոտհարքներում, այնպես էլ արոտներում: Վորոշ տեղերում խոտակազմի մեջ դերակշռող է հանդիսանում: Անասունները (գլխավորապես վոչխարները) հավաքված դանգաղիկը թե թարմ և թե չոր վիճակում լավ են ուտում:

ԹՈՒՆԱՎՈՐ ՅԵՎ ՎՆԱՅԱԿԱՐ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ա Ն Գ Ո Ւ Չ—(Veratrum) - чемерица

Բազմամյա բույս է վոչ յերկար արմատներով: Ցողունները հաստ են և բարձր, տերևները լայն ելիպսաձև: Ծաղիկները հավաքված են շատ յերկար ծաղկափթիթուլային ծողուններով: Վայրի վիճակում պատահում ենք գլխավորապես լեռնային և ալպյան զոնաներում, Անդրկովկասի բոլոր մասերում:

Արմատը, ցողունը, տերևները, ծաղիկները և սերմերը բոլորն էլ թունավոր են: Սոտի չորացումը բոլորովին չի վոչնչացնում անդուզի թունավոր հատիկ: Թյունը կան յենթադրութուններ, վոր անդուզով խառնված խոտի կողքին յեղած խոտերն էլ նույնիսկ ներծծում են դրանց թունավոր նյութերը և դառնում են թունավոր: Անդուզը չափազանց վատ է աղբում հատկապես ձիերի վրա, նույնիսկ



Նկ. 10. Անդուզ

դո՞ք մոհամեմո յրամզդտամո դմդոդշտոոդո ոռս՛՛՛՛ :դ յրսդեթոյտո
ուտում: Նույնիսկ մեղուները սատկում են անդուզից: Պայքա-
րելու միակ միջոցն է՝ նրանց արմատախիլ անելը:

Բ Ի Շ — A c o n i t u m

Բազմամյա յերկար ցողուններով և լավ տերևավորված բույս
է: Հողի տակ ունի հաստ կոճղարմատներ: Ծաղիկները խոշոր են
և վողկուլոզներով հավաքված: Պատահում է բարձր լեռնային
մարգագետիններում: Բիշը պարունակելով իր մեջ նարկոտիկ
ալկալոիդներ, շատ թունավոր է, առաջացնում է անասունների
աղիքների բորբոքում և մահ: Թեպետ արոտներում անասունները
չեն ուտում բիշը, բայց խոտհարքներից հավաքված խոտի մեջ
լինելու դեպքում ել մեծ ֆլեամներ են պատճառում անասուններին:
Բիշից նույնիսկ մեղուների միջոցով վերցրած մեղրը ունի թու-
նավոր հատկություն:

Վ Ո Ջ Լ Ա Խ Ո Տ — D e l p h i n i u m

Միամյա կամ բազմամյա, մինչև 60 սանտ. բարձրությու-
նունցող ցողուններով բույս է: Պատահում է մեր հարթավայրե-
րից մինչև բարձր լեռնային մարգագետիններում: Ունի թունավոր
հատկություն. անասուններն արոտներում խուսափում են դրա-
նից: Չոր խոտի մեջ քիչ պարունակելու դեպքում այնքան էլ
ֆլեասակար չէ, իսկ շատ լինելու դեպքում վտանգավոր է:

Գ Ո Ր Տ Ն Ո Ւ Կ Ն Ե Ր — R a n u n c u l u s

Մեծ մասամբ միամյա բույսեր են, վորոնք տարածված են
գլխավորապես լեռնային խոնավ մարգագետիններում: Տերևները
խոշոր են և կտրտված: Ծաղիկները դեղին են և շատ վառ գույնի:
Կանաչ վիճակում նա անասունների համար ֆլեասակար է, շնորհիվ
իրենց ծաղիկների ու տերևների ունեցած թունավոր նյութերի:
Առանձնապես ֆլեասակար են ձիերի և վոչխարների համար, առա-
ջացնելով լյարդի հիվանդություն: Չորացնելու դեպքում թունա-
վոր հատկություններն անցնում են և անասուններն ուտում են
առանց ֆլեասվելու, թեպետ գորտնուկի խառնուրդը չոր խոտի
մեջ բավականի իջեցնում է նրա արժեքը:

Ի Շ Ա Կ Ա Թ Ն Ո Ւ Կ — E u p h o r b i a

Մեծ մասամբ բազմամյա, դեղին ծաղիկներով և յերկար, նեղ
տերևներով բույս է: Բուրբ մասերում ունի կաթնաման թունա-
վոր նյութ: Պատահում է ամեն տեղ, մինչև բարձր լեռնային
մարգագետիններում, իսկ ավելի շատ՝ ցանքսերում և բանջարա-
նոցներում, վորտեղից նա դուրս է վանում կուլտուրական բույ-
սերի մատղաշ ծիլերը: Անասունները կանաչ վիճակում իշակաթ-
նուկը չեն ուտում, բայց չոր խոտի մեջ քիչ քանակությամբ
լինելու դեպքում ուտում են և մեծ ֆլեաս չի հասցնում: Իրա դեմ
կարելի յե պայքարել հաճախակի քաղելու և արմատահան անելու
միջոցով:

3. ԽՈՏԻ ԿԱԶՍՈՒՅՈՒՆԸ (ՍՆՆԳԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐԸ)

Անասունների կերը (ինչպես և մարդու) պետք է կազմված լինի,
որգանական և անորգանական նյութերից: Խոտակեր կենդանիների
կերը, ինչպես գիտենք, տալիս են բույսերը, վորոնք ոգտա-
գործելով արևի ճառագայթները, կուտակում են այդ վորպես բարդ
որգանական նյութեր: Վորպեսզի կարողանանք ձիշտ հաշվի առ-
նել անասուններին սրվող կերը և սրված կերի եֆեկտը, նրա
սննդարարությունը, արտադրողականությունը, անհրամեշտ է լավ
իմանալ կերի քիմիական կազմությունն ու նրա ազդեցությունը
կենդանիների որգանիզմի վրա:

Խոտը կազմված է հեղուկ և չոր նյութերից: Չոր նյութերն
են որգանական և հանքային մասերը: Որգանական մասը կազմ-
ված է ազոտային և անազոտ նյութերից. ազոտային նյութերն
են սպիտակուցը կամ պրոտեյինը և ազոտային վոչ սպիտակու-
ցային նյութերը: Իսկ անազոտ նյութերն են՝ ճարպը, թաղան-
թանյութը և անազոտ եկտրակտային նյութերը: պրոֆ. Ի. Պո-
պովի կարծիքով գանազան տիպի խոտերի քիմիական կազմու-
թյան մեջ նկատվում է շատ խոշոր տարբերություն, նայած թե
ինչ բույսերից է կազմված խոտը, յերբ է քաղված, ինչպես է
հավաքված, չորացրած, պահված և այլն, ըստ նույն պրոֆ. Պո-
պովի կոպիտ հաշվի—խոտի կազմությունը կարելի յե բնութա-
գրել հետևյալ թվերով (տոկոսներով):

Պատի տեսակը	Ջուրը	Պրոտեյինը	Ճարպը	Անաղոտ նյութերը	Թաղանթանյութը	Մոխիրը
Վատ մարգագետնային խոտ	14,3	7,5	1,5	38,2	33,5	5,0
Միջակ >	14,3	9,7	2,5	41,4	26,3	6,2
Լավ >	16,0	13,5	3,0	40,4	19,3	7,7

Ինչպես յերևում է աղյուսակից՝ վատ խոտն աղքատ պրոտեյինով ու մոխրով, բավականաչափ հարուստ է թաղանթանյութով, քան թե լավ խոտը, և հակառակը, լավ խոտը հարուստ է պրոտեյինով:

Ճարքեր վորակի խոտի չոր նյութերի մարսելիությունը նույնպես յենթակա յե մեծ տատանումների, վորը պարզ ցույց են տալիս ներքևում բերվող թվերը. (տոկոսներով):

Պատի տեսակը	Որգանական նյութերը	Պրոտեյինը	Թաղանթանյութը
Վատ մարգագետնային խոտ	46—59	35—61	46—64
Լավ մարգագետնային խոտ	61—79	60—73	63—80

Ստորի ազոտային նյութերից է պրոտեյինը կամ սպիտակուցը, վորի մեջ ազոտը կազմում է մոտ 16%:

Յեթե ցանկանում ենք իմանալ վորևե կերարույսի մեջ յեղած սպիտակուցի քանակը, պետք է վորոշել նախ հետադարձող բույսի միջև յեղած ազոտի քանակը, ապա ստացված թիվը բազմապատկել 6,25-ով: Ստացված թիվը կլինի մոտավոր, վորովհետև փաստորեն սպիտակուցը միջիչ ավելի պետք է լինի, քանի վոր ազոտ լինում է նաև բույսի այլ նյութերի մեջ: Սպիտակուցները (պրոտեյինը) շատ անհրաժեշտ նյութ են անասունների համար՝ նրանց մկանների զարգացման, կաթի ու մսի առաջացման համար: Ամենից շատ սպիտակուցային նյութեր պարունակում են թիթեոնածաղիկների ընտանիքին պատկանող բույսերը

(մինչև 15%), իսկ խոտազգիների ընտանիքին պատկանողները՝ մինչև 10%:

Կերի անագոս նյութերից է բուսական ճարպը, վոր նույնպես անհրաժեշտ է անասունների ճարպակալման համար: Ճարպը ծառայում է անասունների որդանիղմում վորպես ջերմության աղբյուր և անհրաժեշտ է նորմալ զրուխյան համար: Իսկ բույսերի մեջ ճարպի մեծ քանակությունը ցանկալի չէ, վորովհետև այդպիսի խոտն անասունները լավ չեն ուտում:

Թաղանթանյութի կազմություն մեջ սննդարարության կողմից կարևոր է ցելյուլոզան, վորը պարունակում է մոտ 40% ածխածին և մարվում է անասունների կողմից, իսկ թաղանթանյութի մնացած բոլոր նյութերը սննդարար չեն:

Մոխրի կազմության մեջ են մտնում յերկաթը, կալցին, կալին, նատրին, ֆոսֆորը, ծծումբը և ուրիշ ելեմենտներ: Կերի ամենակարևոր հանքային նյութերից է ֆոսֆորաթթվային կերը, աղը և յերկաթը, վորոնց պակասությունը խոտի մեջ անդրադառնում է անասունների վրա շատ վատ, մանավանդ մատղաչ անասուններին:

Այս կամ այն կերի սննդարար արժեքը վորոշվում է մի կողմից՝ նրա մեջ պարունակվող սննդարար նյութերի տոկոսով (գլխավորապես ազոտային նյութերի) և մյուս կողմից՝ մարսողության գործակիցով: Եթե վորևե կերի մեջ կան մեծ քանակությամբ սննդարար նյութեր, իսկ մարսողության տոկոսը ցածր է, ապա այդպիսի կերը, ի հարկե, չի կարելի հաշվել բարձր արժեքի և հակառակը. անհրաժեշտ է, վորպեսզի կերը և՛ շատ սննդարար նյութեր պարունակի իր մեջ, և դյուրամարս լինի: Պետք է ընդգծել, վոր խոտի մեջ սննդարար նյութերի տոկոսային հարաբերությունը խիստ փոփոխության է յենթակա թե այն դեպքում, յերբ տարբեր բույսերից է կազմված լինում խոտը, և թե այն դեպքում, յերբ միևնույն բույսից է կազմված: Դրա պատճառները շատ բազմազան են և կախված են թե բնական և թե տեխնիկական հանգամանքներից: Որինակ ավուլյուրը և կորնգանը, վորոնք ծաղիկուլ շրջանում պարունակում են մեծ քանակությամբ սպիտակուց, վեգետացիոն շրջանի վերջում, ցողունների կոշտացման հետևանքով կորցնում են մեծ քանակությամբ ազոտ, վորի հետևանքով ստացվող խոտի մեջ պակասում է սպիտակուցի տոկոսը: Կամ յեթե վերցնենք միևնույն տեղից անձրևոտ և պարզ յեղանակներին հավաքված խոտը, կտեսնենք, վոր

պարզ յեղանակին հավաքված խոտն ավելի շատ սննդարար նյութեր ե պարունակում իր մեջ, քան անձրևոտ յեղանակին հավաքված խոտը, վորովհետև անձրևները լվանում են ու տանում այդ սննդանյութերից վորոշ մասը: Վերջապես՝ ջերմության պակասության դեպքում սննդարար նյութերի հարաբերությունը խիստ փոփոխություն ե կրում, վորովհետև բույսերը՝ չստանալով անհրաժեշտ քանակությամբ ջերմություն, դժվար են յուրացնում հողի սննդարար նյութերը:

Խոտի մեջ սննդարար նյութերի քանակության պայմանական լինելը բացատրվում ե և ուրիշ շատ հանգամանքներով, վորոնց մասին կանգ կառնենք հետևյալ գլուխներում: Այժմ անհրաժեշտ ե ասել միայն այն, վոր աչքաթող չի կարելի անել կերախոտի վերաբերյալ վոչ մի աշխատանք և ձեռնարկում, վորոնցով պարզապես ասացվում ե բարձր սննդարար արժեք ունեցող կերերի ստացումը:

4. ԽՈՏԻ ՀԱՎԱՔԵԼԸ ՅԵՎ ՊԱՀՊԱՆԵԼԸ

ԽՈՏԻ ՔԱՂԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Մեր նպատակն ե, վորքան կարելի յե մարդագետնային վորոշ տարածությունից ստանալ քանակով շատ, վորակով բարձր տեսակի խոտ: Դրա համար անհրաժեշտ ե լավ իմանալ, թե յերբ կարելի յե ստանալ այդպիսին, այսինքն բույսերի կյանքի զարգացման վոր աստիճանում և ամառվա վոր շրջանումն ե ստացվում վորակով լավ և քանակով շատ խոտ, վորպեսզի այդ շրջանում կատարենք խոտհունձը:

Շատ հաճախ պատահում ե, վոր ուշ քաղելու դեպքում բերքի քանակությունն ավելի շատ ե լինում, քան վաղ քաղելու դեպքում, բայց յեթե ուշադրություն դարձնենք ստացված խոտի մեջ պարունակվող սննդարար նյութերին, կատանենք, վոր մենք կորցնում ենք կրկնակի չափով, վորովհետև խոտի սննդարար նյութերից սպիտակուցը և ճարպը շատ նվազ չափով են մնացած լինում այդպիսի խոտի մեջ, իսկ դրա փոխարեն խոտը կազմված ե լինում գլխավորապես թաղանթանյութից, վորը, ինչպես վերեվում ասացինք, վոչ միայն քիչ արժեք ե ներկայացնում սննդարարության տեսակետից, այլ և նրանց մեծ մասն անմարսելի յե կենդանիների համար:

Սննդարար նյութերի պարունակությունը կանաչ խոտի մեջ ամառվա ընթացքում շատ խիստ կերպով փոփոխվում ե, այսինքն, վորքան յերիտասարդ ե լինում բույսը, այնքան նրա մեջ շատ են լինում սպիտակուցային նյութերը և վորքան բույսն ավելի յե մոտենում հասունության, այնքան կարևոր սննդարար նյութերի քանակն սկսում ե պակասել: Քանի վոր սննդարար նյութերի գլխավոր մասը գտնվում ե տերևների և ծաղիկների մեջ, իսկ դրանք դնալով թափվում են, կամ չորանում և ամառվա վերջին մնում են միայն չոր, կոշտ, կոպիտ ցողունները, շատ քիչ տերևներով, վորոնք, ինչպես վերևում ասացինք, բացի վոչ սննդարար թաղանթանյութից, համարյա թե ուրիշ վոչ մի նյութ չեն պարունակում իրենց մեջ, ապա այս դեպքում ստացված խոտը, պարզ ե, վոր կլինի համարյա բոլորովին անպետք: Հաստատ կարելի ե ասել, վոր ինչքան շուտ (վաղ) քաղենք խոտը, այնքան նա շատ սննդարար նյութեր կպարունակի իր մեջ, և ընդհակառակը, ուշ քաղելու դեպքում ստացված խոտը քիչ սննդարար նյութեր կունենա իր մեջ:

Կատարված բազմաթիվ դիտողություններն ու փորձերը ցույց են տվել, վոր յեթե ցանկանում ենք լավ մարսելի խոտ ստանալ, խոտը պետք ե քաղել ծաղիկուց մի քանի օր առաջ, կամ հենց ծաղիկու շրջանում, վորովհետև այդ շրջանում բույսերի մեջ սննդարար նյութերի քանակությունը բոլորից շատ ե լինում, այն ել հավասար չափով տարածված բույսի բոլոր մասերում: Այդ ժամանակ քաղված խոտն անասուններն ուտում են մեծ ախորժակով, առանց փչացնելու ու առանց մնացորդի, իսկ ուշ քաղած խոտը, վորի ցողունները լինում են շատ կոշտացած կամ փայտացած, անասուններն ամբողջովին չեն ուտում, այլ կիսից ավելին (չորացած մասը) թողնում են վորպես կրճոնք:

Վորպեսզի ավելի պարզ լինի այն հանգամանքը, վոր բույսերը ծաղիկուց առաջ ավելի շատ սննդարար նյութեր են պարունակում, քան ծաղիկուց հետո, կրեքինք հետևյալ թվերը:

100 կիլո խոտի մեջ պարունակվում է սննդարար նյութեր (կիլոներով):

Պտտի տեսակը	Քաղելու ժամանակը	Մարսվող սպիտակուց	Մարսվող վոշ ազոտային նյութերը	Կերային միավորները
Ասվույս	Մինչև ծաղկելը	10,3	30,4	46
Ասվույս	Ծաղկելու շրջանում	6,7	32,6	32
Կորնզան	Մինչև ծաղկելը	7,8	40,9	55
Կորնզան	Ծաղկելու ժամանակ	7,5	40,9	52
Վ ի կ	Ծաղկելու սկզբին	10,8	34,5	51
Վ ի կ	Ծաղկելու ժամանակ	6,6	36,1	45

Պտտը քաղելու ժամանակը վորոշելիս պետք է նկատի առնել այն խոտաբույսերը, վորոնք գերակշռում են, այսինքն գտնվում են խոտակազմի մեջ մեծ քանակությամբ (այն դեպքում, յերբ դրանք ցանկալի կերարույսեր են) և յեթե այդ խոտաբույսերի արդեն ծաղկելու ժամանակն է, այլևս չպետք է սպասել մյուս ավելի քիչ քանակություը կազմող բույսերին և պետք է անցնել խոտհնձին, վորովհետև սպասելուց այդ կարևոր բույսերն այնքան կհասունանան, վոր նրանց ցողունները կկոշտանան, տերևներն ու ծաղիկները կթափվեն և խոտի վորակն անմիջապես կիջնի:

Դիտավոր կերաբույսերի քաղելու ժամանակը մենք ներքեվում տալիս ենք ըստ իրենց զարգացման ստադիաների: Ինչ վերաբերում է որացուցային ժամկետներին, այժմս չենք տալիս, վորովհետև այդ խնդիրը նախ՝ կարելի յե պարզել յերկար դիտողություններից հետո (մեր պայմաններում), յերկրորդ՝ քաղելու որացուցային ժամկետները տարբեր շրջաններում տարբեր են, և կախված յեղանակներից և շատ ուրիշ պայմաններից, վորոնց հաշվի առնելը բավականին դժվար է առայժմս, վորի հետևանքով անընդհատ այդ ժամկետները կարող են փոխվել՝ մի քանի որով առաջ կամ հետ:

Առվույսը պետք է սկսել քաղել ծաղկելու առաջին շրջանում այն հաշվով, վոր յերբ դաշտն ամբողջովին ծաղկած լինի, քաղը վերջանա: Յեթե առվույսի ցանքսի տարածությունը շատ մեծ է,

խոտքաղը պետք է սկսել այն ժամանակ, յերբ արդեն ծաղկել է նրա ¹/₁₀ մասը, իսկ յեթե քիչ է, այն ժամանակ յերբ ծաղկել է արդեն ¹/₅ մասը: Ուշացնելու՝ դեպքում տերևները կթափվեն, ցողունները կկոշտանան, մի խոտքով սննդարար նյութերի զգալի մասը կկորչի: Բացի այդ, այդ հանգամանքը (ուշ քաղելը) կարող է անդրադառնալ առվույսի հետագա զարգացման վրա, այսինքն չենք կարողանա ստանալ այն քանակությամբ յերկրորդ և յերրորդ քաղից, ինչքան կարելի յեր ստանալ շուտ քաղելուց հետո, վորովհետև դրանից հետո դժվար են զարգանում նոր ցողունները նույն տարին, և այդպիսով կանգ է առնում նրանց աճույնը սովյալ վեգետացիոն շրջանում:

Կորնզանի քաղը պետք է սկսել մինչև ծաղկելը կամ ծաղկած մոմենտից քիչ հետո, վորովհետև գրա լրիվ ծաղկելը շատ արագ է տեղի ունենում, այն է՝ 5—7 որվա ընթացքում, իսկ ծաղկելուց հետո արդեն կորնզանից ստացված խոտը չափազանց կոպտ է լինում: Կորնզանի խոշոր տարածություններ ունենալու դեպքում՝ քաղը պետք է սկսել անպայման ծաղկելուց առաջ այն հաշվով, վորպեսզի խոտքաղը վերջանա ծաղկելու շրջանում: Ժամանակին քաղված կորնզանի դաշտից հեռությամբ կարելի յե ստանալ նաև յերկրորդ քաղը, իսկ ուշացնելուց հետո հնարավոր չի յերկրորդ բերք ստանալ:

Կառմիս յերեհնուկի քաղելու ժամանակը վորոշելիս պետք է նկատի ունենալ հետևյալը, վոր յեթե ցանկանում ենք նույն տեղից ստանալ նաև յերկրորդ քաղը, ապա առաջին քաղը պետք է ըսկսել 7—8 որ ծաղկելուց առաջ, իսկ յեթե բավականանում ենք միայն մի քաղով, ապա առաջին քաղը պետք է սկսել ծաղկելու շրջանում: Դրանից ուշ չպետք է քաղել, վորովհետև չորանալուց տերևների մի մասը թափվում է, իսկ մյուս մասն էլ չորացնելիս ջարդվում ու փշրվում են, վորը խիստ կերպով անդրադառնում է ստացվող խոտի վորակի վրա:

Տիմոֆեյեվկան ծաղկելուց հետո շատ արագ կերպով փայտանում է և անասունները վատ են մարում, իսկ յերբ քաղվում է, մինչև ծաղկելը, նախ՝ ստացվում է յերկրորդ և նույնիսկ յերրորդ քաղ և յերկրորդ, վոր գլխավորն է՝ կաթնատու անասունների կաթնատուությունը բարձրանում է:

Վիկայի վորոշ տեսակներն այն սակավաթիվ բույսերիցն են, վորոնք ծաղկելուց հետո նորից կուտակում են սննդարար նյութեր և յեթե քաղում ենք նույնիսկ պտղակալման շրջանում,

ստացված խոտի վորակը վատ չի լինում, միայն այդ դեպքում
յերկրորդ բերք ստանալ հնարավոր չե: Այդ պատճառով վիկի
քաղը պետք է կատարել այն ժամանակ, յերբ համարյա թե ամբողջ
արդեն ծաղկել է:

Մեղրավորասից (եշի յոնջա) ստացվող խոտի վորակը շատ
մեծ չափով կախված է քաղելու ժամանակից, վորովհետև ուշ
քաղելուց վոչ միայն խոտը կոշտանում է և սննդարար նյութերի
մի մասը կորչում, այլ և շատանում է այն ֆլասակար նյութը
(կուժարինը), վորը գտնվում է մեղրավորութասի բույսի մեջ: Դրա
հետևանքով մեղրավորութասի քաղն անհրաժեշտ է կատարել այս-
պես՝ առաջին տարին պետք է հնձել ծաղկային բողբոջների
առաջանալու շրջանում, յերբ բույսը հասել է մինչև 50—70 սնու-
բարձրության, իսկ հետևյալ տարիներին կարելի յե քաղել նաև
ծաղկելու առաջին շրջանում:

Սուդանի խոտը քաղվում է այն ժամանակ, յերբ առաջանում են
բույսի վրա հուրանները (ծաղկափնջերը), վորովհետև խոտն այդ
ժամանակ քնքուշ է լինում և հեշտությամբ չորանում է ու հնա-
րավոր է լինում նույն տարին յերկրորդ բերք վերցնել և դրանից
հետո էլ անասուններին նույն տեղում արածեցնել:

Սողացող չայխը պետք է քաղել ծաղկելուց մի քանի ուր
առաջ, վորպեսզի ցողունները չկոշտանան և հնարավոր լինի ստա-
նալ վորոշ տեղերում նաև յերկրորդ և յերրորդ բերք:

Անֆիս ցորենուկի ցողունները ծաղկելու մոմենտից սկսում
են շատ խիստ փայտանալ, այդ պատճառով վորքան հնարավոր է
շուտ պետք է քաղել այն խոտհարքները, վորոնց խոտակազմի
մեջ գերակշռում է այս բույսը:

Ադվեսապոչը ծաղկելուց հետո շատ շուտ կոշտանում է և
Անհրաժեշտ է սկսել քաղը դեռ ծաղկելը չսկսած մոմենտից, վոր-
պեսզի խոտքաղը վերջացնելու ժամանակ ֆնացած մասը նոր ծաղ-
կելիս լինի:

Ինչպես տեսանք վերևում բերված հիմնական կերաբույսերի
որինակներից, դրանցից ստացված կերախոտի արժեքն իջնում է
ուշ քաղելու դեպքում, և բացի այդ, հնարավորություն չի լինում
ստանալ յերկրորդ և յերրորդ բերք: Համարյա թե նույնը կարելի
յի ասել նաև բազմատեսակ խոտակազմ ունեցող բնական խոտ-
հարքների մասին, վոր խոտի քաղը հարկավոր է սկսել ծաղկելուց
մի քիչ առաջ կամ թե ծաղկելու ժամանակ. դրանից ուշ կատա-

րելու դեպքում մենք ունենում ենք շատ մեծ կորուստներ,
պլխավորապես վորակի տեսակետից:

Բացի վերը հիշված հանգամանքից, պետք է նկատի առնել
նաև այն, վոր շուտ քաղելու դեպքում, մենք կատարում ենք մի
մեծ աշխատանք, վորը հսկայական նշանակություն ունի գյու-
ղատնտեսության մեջ. տվյալ դեպքում, խոտհարքների համար
դա մոլախոտերի դեմ պայքարելն է: Ինչպես հայտնի յե, կուլ-
տուրական ցունքների նման մարգագետիններում նույնպես շատ
մեծ հաջողությամբ զարգանում են և իրենց համար բարենպաստ
պայմաններում աճում վոչ ցանկալի, ֆլասակար բույսերը՝ մոլա-
խոտերը, վորոնք քիչ ֆլաս չեն հասցնում խոտհարքներում կարե-
վոր խոտաբույսերին: Դրանք հողից վերցնելով սննդարար նյու-
թերի դեպի մասը, խեղդում են կերաբույսերին: Դրանցից ազատ-
վելու ամենահիմնական միջոցներից մեկը խոտհարքների շուտ
քաղելն է, այն ժամանակ, յերբ դեռ այդ մոլախոտերը չեն սեր-
մակալել ու ցրել իրենց սերմերը: Այդ մոլախոտերը մեծ մասամբ
լինելով միամյա, շուտ քաղելու դեպքում՝ դրանց մեծ մասը վոչըն-
չանում է ու մարգագետինները հաջողությամբ ազատվում են
դրանցից: Իսկ ուշ քաղելու դեպքում, նրանք հետագա տարիներ
ում ավելի մեծ տարածություններ են գրավում, տալիս մեծ
մոսսա, վորն ունենալով հաստ, հյութալի ցողուններ, չորանում
է շատ դանդաղ, վորպիսի պրոցեսի ժամանակ կորչում են կարե-
վոր կերաբույսերի հիմնական սննդարար մասերը (տերևներն ու
ծաղիկները):

2. ԽՈՏԻ ՔԱՂԵԼԸ

Կանաչ խոտի քաղը կատարվում է յերեք ձևով՝ ձեռքով (գերանդիչով), խոտհունձ մեքենայով՝ ձիու ուժի միջոցով և խոտհունձ մեքենայով՝ տրակտորի ուժի միջոցով: Քաղը պետք է կատարել շատ արագ, վորովհետև յեղանակները կարող են փոխվել և այդ պատճառով աշխատանքները կանգ կառնեն:


Ձեռքով քաղելն ամենադժվարն է, ամենամանրակրկիտը, շատ թանկ է նստում և շատ ել դանդաղ է կատարվում: Այս ձևով քաղելիս ամբողջ որվա ընթացքում մեկ բանվորը կարողանում է քաղել միայն կես հեկտարի չափ: Խոշոր տնտեսությունների (խորհանտեսություններ և կոլտնտեսություններ) պայմաններում, վորտեղ հնարավոր է, ձեռքի քաղն աստիճանաբար պետք է փոխարինվի մեքենայով: Ձիու ուժով աշխատող խոտհունձ մեքենան կարող է որական 10 ժամ աշխատելով 3—4 հեկտար խոտհարք քաղել, իսկ տրակտորով աշխատելիս արտադրողականությունը բարձրանում է մինչև 10—12 հեկտար: Բացի այն, վոր գերանդիչով քաղելիս աշխատանքի արտադրողականությունը շատ ցածր է, նա ունի նաև այն բացասական կողմը, վոր բույսերը քաղելիս հավասար բարձրություն վրա չեն կտրվում, մեկ տեղ ավելի բարձր է կտրվում, մյուս տեղը ցածր, վորի պատճառով հետագա քաղի ժամանակ այդ տեղում բույսերը հավասար չեն աճում և դրա հետևանքով, յերբ մեկ տեղում արդեն բույսերի քաղելու ժամանակն է լինում, մյուս տեղում բույսը դեռ նոր է սկսում աճել, իսկ մի յերրորդ տեղում նույնիսկ հասունացած է լինում ու սերմակալած: Ահա այդ ժամանակ շատ դժվար է լինում վորոշել քաղելու իսկական ժամանակը և ստացված խոտն էլ անկասկած լինում է վատ: Ինչպես տեսանք, մեքենայի քաղը նախ շատ արագ է կատարվում, յերկրորդն էլ՝ խոտը լավ է քաղվում՝ հավասար բարձրություն վրա և ավելի ցածրից է կտրվում, հետևապես շատ ել խոտ է ստացվում:

Չորացնելու տեսակետից մեքենան նույնպես ձեռնտու չէ, քանի վոր մեքենայի միջոցով քաղված խոտը շատ արագ է չորանում, վորն, ինչպես վերևում տեսանք, յեղանակների փոփոխություն պատճառով մեծ նշանակություն ունի: Ուրեմն պարզ է, վոր մեքենայի միջոցով մի կողմից խոտհունձի աշխատանքները թեթևանում են, իսկ մյուս կողմից՝ բերքը բավականին ավելանում է:

Բացի այդ, քաղելու ժամանակ պետք է նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքները, անկախ նրանից, թե ինչով է կատարվում խոտի քաղը:

ա) Խոտը հարկավոր է քաղել շատ ցածրից, մանավանդ՝ փոտազգիներից կազմված լինելու դեպքում, (մի քիչ ավելի բարձր, յերբ կազմված է լինում թիթեռնածաղիկներից), այդպիսով ստացվում է խոտի մաքսիմումը, հեշտանում են չորացնելու աշխատանքները և հետագայում ավելի լավ է աճում այդտեղ բուսականությունը:

բ) Խոտազգիների առաջին քաղը պետք է կատարել ավելի ցածրից, քան յերկրորդը և յերրորդը, վորովհետև մնացած ծղնոտները շատ արագ փայտանում են և խանգարում յերկրորդ քաղի ժամանակ ու բթացնում են թե դանակները, և թե գերանդիչները:



Նկ. 12. Խոտհունձ մեքենա

գ) Բազմամյա բույսերի վերջին քաղը պետք է կատարել այնպես, վոր ժամանակ մնա նոր մասսա առաջանալու՝ ձյունը պահելու համար, հակառակ դեպքում բազմամյա բուսականությունը կարող է փչանալ:

դ) Մեքենաներով քաղելու դեպքում պետք է կատարել շրջանաձև պտույտներ, վորը շատ ժամանակ է տնտեսում շրջադարձեր կատարելու հետ համեմատած:

3. ԿԱՆԱԶ ԽՈՏԻ ՉՈՐԱՅՈՒՄԸ


Խոտի չորացումը խոտհավաքի ամենադժվար և ամենապատասխանատու աշխատանքներից մեկն է: Դրա ճիշտ կազմակերպվելուց է կախված թե բերքի քանակը, թե նրա վորակը և թե նրա առանց կորուստների պահպանվելը:

Խոտի վորակը վորոշելու ժամանակը շատ մեծ ուշադրու-

թյունն և դարձվում այն խնդրին, թե ինչպես և նա չորացրած վորովհետև անկանոն չորացնելու դեպքում, խոտը կարող է փչանալ և իր արժեքը կորցնել, թեկուզ նա լավը լինի և ժամանակին հավաքված:

Սոտի չորացնելու նպատակը և կարևորությունը նրանումն է, վոր դուրս բերենք (գոլորշիացնենք) կանաչ խոտի մեջ յեղած ջրային մասը, վորպեսզի խոտը յերկար ժամանակ դեղի մեջ մնալով չփտի և չկորցնի իր սննդարար նյութերը:

Թարմ կանաչ խոտի մեջ ջուրը կազմում 70—80⁰/₁₀₀-ը. պետք է աշխատել, վորպեսզի չորացնելուց հետո նրա մեջ մնա միայն 10—15⁰/₁₀₀, քանի վոր ձմեռվա համար պահվելիք խոտի մեջ յեթե դրանից ավելի ջուր մնա, կարող է խոտը փտեցնել: Տվյալ չափից



Նկ. 12 ա. Խոտավաճ մեքենա

պակաս ջուր լինելու դեպքում ել խոտը կարող է փչանալ, վորովհետև գերչորացրած խոտերը նույնպես կորցնում են սննդարար նյութերը և անպետք են դառնում անասուններին կերակրելու համար:

Սոտերն ինչպես նորմայից ավելի շատ ջուր պարունակելու, այնպես ել խիստ չորացնելու դեպքում կարող են կորցնել իրենց սննդարար նյութերի զգալի մասը, նայած չորացնելու ձևին ու յեղանակին:

Որինակ՝ յեթե շատ ուժեղ արև է և մի որում հնարավոր է լրիվ կերպով չորացնել, խոտի կորուստը կարող է շատ չնչին լինել, իսկ յեթե արևը դուրս է գալիս ժամանակ առ ժամանակ և լրիվ չորացնելը տևում է մի քանի օր, այդ ժամանակ չոր սնդարար նյութերից խոտը կարող է կորցնել մինչև 10⁰/₁₀₀-ի չափ, իսկ

յեթե պայմանները շատ ավելի անբարենպաստ են, պատահում է, վոր խոտը կորցնում է իր սննդարար նյութերի մինչև 40 և յերբեմնե ավելի ⁰/₁₀₀-ը:

Սոտի չորացնելու վրա ամենավատ ազդեցություններն են ունենում անձրևները, վորի պատճառով խոտի մեջ սկսում են դարգանալ մեծ քանակությամբ բակտերիաներ և սնկեր, վորոնք սկսում են փտեցնել խոտը դեռ չհավաքված վիճակում:

Անձրևներից ավելի շատ վնասվում են գլխավորապես այն խոտերը, վորոնք քիչ թե շատ արդեն չորացել էյին. իսկ ինչ վերաբերվում է նոր քաղած կանաչ խոտերին, նրանք վորոշ չափով ավելի դիմացկուն են և յերբեմն ել նույնիսկ մեծ անձրևները դրանց վնաս չեն հասցնում, միայն քիչ թե շատ յերկար տեղացող անձրևներն են, վոր նրանց վնասում են: Պարզ և լավ յեղանակին չորացած խոտն ստանում է շատ անուշ համ ու հոտ և անասունները մեծ ախորժակով են ուտում այդպիսին, իսկ անձրևոտ յեղանակին չորացած խոտը, վոր միայն չի ունենում այդ անուշ համն ու հոտը, այլ և վորոշ դեպքերում վնասակար է դառնում անասունների համար, առաջացնելով ստամոքսային հիվանդություններ:

Արագ կերպով չորացնելու վրա մեծ ազդեցություն են ունենում նաև քամիները և ողի մեջ յեղած խոտավորյալն չափր: Ողում վորքան քիչ է խոտավորյալը և ուժեղ են քամիները, այնքան շուտ կարող է չորանալ խոտը, առանց մեծ չափով սննդարար նյութերը կորցնելու:

Սոտը չորացնել կարելի յե տարբեր ձևերով, նայած որվա յեղանակին: Յեթե յեղանակը պարզ է ու հարմար չորացնելու համար, պետք է գործադրել վորոշ ձև, իսկ յեթե յեղանակն անձրևփոտ է կամ ամպած, պետք է կիրառել չորացնելու այլ ձև:

Ներքևում մենք ավելի մանրամասն կանգ կառնենք խոտի չորացնելու ձևի մասին պարզ և անձրևոտ յեղանակներին, իսկ այժմ անհրաժեշտ է հիշել, վոր ինչ ձևով ել չորացնելիս լինենք խոտը, պիտք է ափսոսել վորեան կառելի յե փչ շուտ տալ, վորովհետև շատ յեղանակով չափովում յեղ փտվում են ու կորչում բույսերի նուրբ յեղ ամենատանկալիք մասերը՝ սերովներն ու ծաղիկները, վորը չափազանց գցում է խոտի վորակը:

Լավ և կանոնավոր չորացած խոտը պետք է պահպանի իր դուրեկան համն ու հոտը և պետք է լինի ձկուն ու վորովորող, ինչպես, որինակ, թիթեռնածագիկ բույսերը արորելուց պետք է

պահպանեն իրենց հիմնական մասսան, յերբեք չպետք է փշրվեն ու փոշի դառնան: Նույնն ի հարկե վերաբերում է նաև բոլոր մյուս տեսակ կերարույսերին:

Չոր յեղանակին խոտը չորացնելն այնպես պետք է տարվի, վոր խոտը չափից շատ չչորանա կամ ինչպես առում են «չայրվի»: Յեթե խոտը շատ յերկար ժամանակ է մնում փռած գետնին, արևի տակ, ապա նա շատ յենթարկվելով արևի կիզիչ ճառագայթներին, այրվում է և կանաչ գույն պահպանելու փոխարեն, ստանում է առանց փայլի դեղին գույն և վոչ գուրեկան հոտ ու համի խոտ: Պարզ յեղանակներին խոտի չորացնելը կատարվում է հետևյալ մի քանի ձևերով,

ա) Սոտը քաղելուց հետո, յերբ մի քիչ թառամուկ է, փռում ենք բարակ շերտով, մինչև չորանալը հաճախ մի քանի անգամ շուռ ենք տալիս, վորպեսզի արագացնենք չորացման պրոցեսը: Ապա հավաքում փոքրիկ բլուլներով (կուլտեր), վորից հետո խոտն արդեն պատրաստ է ձմեռվա համար և կարելի յե տեղափոխել տուն, դեզ դնել կամ պահել հատուկ պահեստներում: Յեթե խոտը քաղված է հնձող մեքենայով, այդ դեպքում կարիք չի լինում խոտը փռել ամբողջ բարակ շերտի, այլ բավական է մեկ, յերկու անգամ շուռ տալ և ապա բլուլներ (կուլտեր) կազմել: Այս յեղանակով չորացնելն ամենահեշտն է, ամենաեթան և ամենից շատ տարածվածը, միայն սրա բացասական կողմն այն է, վոր չորացնելը տևում է մի քիչ յերկար և շատ ժամանակ է խլում: Բացի այդ, այս ձևով չորացնելը պետք է կատարել այնպիսի տեղերում, վորտեղ կլիման չորային է, կամ թե այնտեղ, վորտեղ տարվա այդ շրջաններում անձրևներ շատ քիչ են գալիս:

բ) Գերանդիով քաղելիս, խոտը թողնում ենք մի քիչ թառամելու, ապա փռում ենք բարակ շերտով (մեքենայով քաղելու դեպքում փռելու կարիք չկա): Որվա մեջ մի քանի անգամ շուռ ենք տալիս և յերեկոյան՝ մինչև ցողի առաջանալը, հավաքում բուլուլ ենք դնում (կուլտ), թողնելով այդպես մինչև հետևյալ առավոտ (մինչև արևի դուրս գալը), վորովհետև այս դեպքում ցողը կամ գիշերվա ընթացքում յեկամ փոքրիկ անձրևներն ավելի քիչ վնաս կտան բլուլ դրած խոտին, քան յեթե թողնենք բարակ շերտով փռված վիճակում: Հետևյալ ուրը նորից փռում ենք և յերեկոյան նույն ձևով հավաքում: Յեթե խոտը չի չորացել այդ ժամանակամիջոցում, այդ նույն ձևով շարունակում ենք մի քանի օր ևս, հետզհետե բլուլներն ավելի խոշորացնելով: Այս ձևով 3—4

օրվա ընթացքում խոտը լավ չորանում է: Ամենորյա խոտի շուռտալը և հավաքելը պետք է կատարել շատ զգուշությամբ, վորպեսզի այդ աշխատանքների ժամանակ չջարգվեն ու փշրվեն բույսերի տերևներն ու ծաղիկները:

Այդ յեղանակով չորացնելը ձեռնտու յե միայն այն դեպքում, յերբ խոտնձի շրջանում ժամանակ առ ժամանակ փոքրիկ անձրևներ են գալիս, իսկ ընդհանրապես սա այնքան էլ լավ ձև չէ, վորովհետև պահանջում է չափազանց շատ բանվորական ձեռքեր՝ շուռ տալու և դիզելու համար:

գ) Սոտը քաղելուց հետո պետք է փռել և յերբ մի քիչ արդեն չորանում է, հավաքել, կազմել փոքրիկ բլուլներ և թողնել այդպես վորոշ ժամանակ: Յերկու յերեք ուրից հետո փոքրիկ բլուլները պետք է խոշորացնել՝ միացնելով 3—4-ը մի տեղ. այդ խոշորացրած բլուլները նույնպես թողնում ենք այդպես մի քանի օր: Յեթե այդ ժամանակամիջոցում յեղանակները լավ ելին, ապա այդ խոտը պետք է արդեն պատրաստ լինի, և կարելի յե արդեն տուն տանել, իսկ յեթե մի քիչ անձրևներ են յեկել, ապա մինչև տուն տանելը (արևոտ օրը) պետք է մի քանի ժամով բաց անել բլուլները, մի քիչ չորացնել և ապա տանել տուն դիզելու:

Այս ձևով խոտ չորացնելը լավ է այն տեսակետից, վոր տերևներն ու մատղաջ ցողունները քիչ են ջարգվում ու կորչում, և մյուս կողմից՝ տերևները չափից դուրս չեն չորանում, վոր խոշոր նշանակութուն ունի խոտի վորակի համար: Մյուս կողմից, այս ձևով չորացնելն այնքան էլ շատ բանվորական ձեռքեր չի պահանջում, ստացված խոտը լինում է շատ բարձր վորակի և անասուններն ուտում են ամբողջովին և մեծ ախորժակով:


Վերև բերված բոլոր ձևերը, ինչպես տեսանք, վերաբերում են այնպիսի դեպքերին, յերբ յեղանակները պարզ են, բայց դրանք անընդունելի յեն և նույնիսկ վնասակար վատ յեղանակների ժամանակ:

Սոտը լավ չորացնելու ամենամեծ թշնամին անձրևներն են, մանավանդ յեթե դրանք յերկար են տևում: Այդպիսի ժամանակ աշխատանքները դժվարանում են և անկասկած բերքի զգալի մասը կորչում է: Սոնավության հետևանքով, ինչպես տեսանք, առաջ են գալիս բակտերիաներ ու սուսկեր, վորոնք սկսում են փտեցնել խոտը: Վորպեսզի այդ ժամանակ փոռվածից ազատենք խոտը, ըսկսում ենք ավելի շուռ-շուռ շուռ տալ այն, վորից կրկին ունե-

նում ենք շատ կորուստներ, այսինքն ջարդվում են, փշրվում բույսերի տերևներն ու ծաղիկները:

Ահա հենց այդ անձրևոտ յեղանակների ժամանակ խոտը չորացնելու համար կան մի շարք այլ ձևեր, վորոնք կարող են կիրառվել մեր պայմաններում:

ա) Յեթե խոտը քաղելուց մի քիչ հետո սկսվում են անձրևները, պետք է անմիջապես հավաքել քաղած ամբողջ խոտը փոքրիկ խրձերի այնպես, վոր քիչ թե շատ չորացած մասերը դասավորվեն դեպի ներս, իսկ ավելի թաց, թարմ մասերը՝ դեպի դուրս, վորովհետև, ինչպես վերևում ասացինք, անձրևներն ավելի շատ ֆլասում են չորացած խոտին, իսկ թարմ խոտերը համեմատաբար ավելի քիչ են ֆլասվում: Խուրձերը պետք է լինեն կոնսիստենտ, այսինքն հիմքերը պետք է լինեն ավելի լայն, իսկ վերի մասերը պետք է վերջնան սուր ծայրով, վորպեսզի անձրևի կաթիլներն ընկնելիս չմնան խոտի վրա, այլ ինչպես տանիքներից սողան դեպի ցած (նկ. 13):



Նկ. 13

Այդ խրձերը այսպես թողնելով, վորոշ ժամանակ նրանց մեջ շատ հեշտություններ մտնում է ողը և ամբողջ խոտը քամու միջոցով կամաց-կամաց սկսում է չորանալ:


Յերբ յեղանակները պարզվում են, խուրձերը պետք է փոխ և նրանց հիմքերն ուղղել դեպի արեգակը: Այս

միջոցը կնպաստի խոնավ մասերի արագ չորանալուն, վորից հետո խոտը կարելի յե հաշվել պատրաստ, և անմիջապես տանել դիզելու կամ պահեստներում տեղավորելու: Իսկ յեթե չորացումը շատ յերկար է տևում, հարկավոր է գոնե հինգ ողը մեկ անգամ խուրձերի տեղը փոխել, վորպեսզի չսկսի փտել խուրձերի հիմքերի մոտ դասավորված խոտը՝ ամբողջ ժամանակ խոնավ գետնին մնալու պատճառով: Խուրձերի տեղերը փոխելն ունի այն նշանակությունը, վոր յեթե յերկար ժամանակ միևնույն տեղն ենք թողնում, խոտը տանելուց հետո խուրձերի տեղում բուսանալուց լավ չի աճում հետագա քաղի համար: Այս ձևով չորացնելն անձրևոտ յեղանակներին շատ ձեռնտու է յե, մասնավորապես յերկար յերեքուկի, առվույտի, կորնդանի և ուրիշ թիթեռնաձողիկ բույսերի համար, վորովհետև այս դեպքում խոտերն ի-

քենց սննդաբար նյութերից շատ քիչ կորուստ են ունենում և համարյա թե բոլորովին չեն փշրվում ու թափվում բույսերի նուրբ մասերը: Սրա բացասական կողմն այն է, վոր պահանջում է շատ աշխատող ձեռքեր:

Խոտը կարելի յե չորացնել և բուրգերի վրա:

Բուրգերը պատրաստվում են մի քանի ձևի և մեծություն. դրանք լինում են յերեք կամ չորս կողմանի: Բարձրությունը կարող է լինել 2—4 մետր: Բուրգի վերևի ծայրերը կապվում են թելերով և ապա մասերն իրարից հեռացնում ու ամրացնում հողի մեջ: Դրանց ըստ լայնության ամրացվում են փայտեր, վորոնք կազմում են բուրգի հարկերը: Խոտը դասավորվում է այնպես, վոր ողը հնարավորություն ունենա ազատ շարժվելու: Միջին մեծության ամեն մի բուրգի վրա կարող է տեղավորվել 7—8 փութ




Նկ. 14 Փայտա հեմարաններ

խոտ, վորը մի քանի ողից չորանալուց հետո կարող է ազատվել յեվ դրա տեղը մտնել դասավորվել, և այդպես ամբողջ խոտհանի շրջանում: Բուրգերը կարելի յե նաև տեղափոխել մի տեղից մյուսը: յեթե խոտհարքները իրարից հեռու յեն գտնվում: Բուրգերը շատ լավ են պահում խոտը և կորուստը լինում է քիչ: Այս ձևով լավ է չորացնել թիթեռնաձողիկներից առվույտը և յերեքուկը:

Չորացման մյուս ձևը՝ դա հատուկ ցանկապատի վրա խոտի փոխելն է: Ցանկապատը պատրաստելու համար պետք է վերցնել ցցեր 3 մետր յերկարություն և մինչև 10 սմ. հաստության ու տնկել հողի մեջ մեկը մյուսից 2—3 մետր հեռավորության վրա: Դրանց հորիզոնական կերպով պետք է ամրացնել փայտեր, վորոնց

յերկարու թյունը լինում է տարբեր, նայած ցցերի քանակին. ամեն մի հորիզոնական փայտը խրված պետք է լինի մյուսից 75 սմ. հեռավորութան վրա, իսկ բոլորովին ներքևի հորիզոնական փայտը հողից պետք է լինի բարձր առնվազն մեկ մետր:

Ստոր պետք է դասավորել ներքևից այնքան, մինչև վոր կհասնի յերկրորդ հարկին, հետո յերկրորդից մինչև յերրորդ և այդպիսով մինչև վերև: Լավ յեղանակներին ցանկապատի վրա խտոր շատ շուտ և չորանում, իսկ անձրևոտ յեղանակներին չորացումը տևում է 15—20 օր:



Նկ. 15 Փայտյա հենարաններ

Բոլոր վերը թված հենարանների վրա չորացնելու նպատակն է, վոր չորացումը կատարվի դանդաղ, առանց կորուստի:

Ստոր հավաքում են փոցխերով, վորը հարմարեցված է ձիով աշխատեցնելու համար. դրանից հետո կազմում են փոքրիկ խորաններ և դասավորում այդ հենարանների վրա այն հաջով, վոր դրանց հիմքերը գետնից բարձր լինեն, իսկ այդ «դեղերին» պետք է տալ կոնի ձև, պատերը պետք է հավասարեցնեն՝ ուսուցքներ և փոսեր չլինելու համար, վորպեսզի տեղացող անձրևների կաթիլները չհնան խտի վրա, այլ հոսեն դեպի հիմքը և թափվեն գետին:

Այդ հենարանների վրա պետք է աշխատել խտոր շատ հաստ շերտով չդասավորել, վորն ավել 70—80 սմ. հաստութամբ: Իսկ յեթե խտոր շատ թաց է և բույսերի ցողուններն ել շատ հաստ են ու ջրալի, այդ դեպքում խտի շերտն ավելի բարակ պետք է լինի: Այդպես հենարանների վրա դասավորված խտոր կարիք չկա այլևս շուտ տալու կամ տեղափոխելու, բացի այն մասից, վոր լավ չէ դասավորված, վորովհետև այդ դեպքում փոսեր են առաջ գալիս կամ քամիները հեշտությամբ քանդում են:

Ստի չորացնելու հիշյալ ձևերը կատարելագործված ձևեր

են և մեր վորոշ շրջանների համար ընդունելի: Այս ձևով չորացնելը, համեմատած մյուս ձևերի հետ, այնքան մեծ աշխատանք չի պահանջում, ստացված խտն էլ վորչնչով պակաս չի լինում արևի տակ չորացրած խտից:

4. ԳՈՐԾ ԽՈՏ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Ստահնձի շրջանում յերկար ժամանակ անընդհատ անձրևներ գալու հետևանքով, յերբ այլևս հնարավոր չի լինում սովորական ձևով խտի չորացումը, պատրաստում են այսպես կոչված գորշ խտ:

Գորշ խտն ստացվում է խմբման միջոցով, վորի հետևանքով առաջ է գալիս բարձր ջերմություն, առաջացնելով խտի խոնավության դուրբիացումը: Գորշ խտի պատրաստումը շատ պատասխանատու գործ է, այդ պատճառով՝ մինչև այդ աշխատանքներին ձեռնարկելը, անհրաժեշտ է լավ ուսումնասիրել, վորովհետև դրա պատրաստելը կախված է դեղի մեծությունից, դասավորելուց, յեղանակից, բույսերի կազմությունից և այլ պատճառներից:

Գորշ խտի պատրաստելը կատարվում է հետևյալ կերպ՝ քաղելուց հետո թողնում ենք մի յերկու օր, վորպեսզի խտը թառամի, վորից հետո հավաքում ենք, կազմում դեղեր, ըստ վորում հավաքված խտը պետք է իր մեջ պարունակի կիսով չափ այն խոնավությունը, վորը գտնվում էր կանաչ խտի մեջ: Այդ ստուգելի կարելի չէ շատ հասարակ ձևով. պետք է կշռել յերկու անգամ. առաջին անգամ այն ժամանակ, յերբ նոր ենք քաղում խտը, իսկ յերկրորդ անգամ հավաքելիս. յեթե խտը թեթև է լինում մոտավորապես 60 տոկոսով, ապա պարզ է, վոր խտը կորցրել է իր մեջ պարունակող խոնավության մոտ կեսը: Կամ մի ուրիշ այլևս, վորով նույնպես կարելի չէ վորոշել. վերցնում են մի փունջ խտ և վորոշում, յեթե նրանից ջուրը չի ձորում, կամ թե ձորում է փոքր կաթիլներով, ապա այդպիսի խտը նույնպես կարելի չէ հավաքել: Ինչպես առաջին, այնպես ել յերկրորդ ձևով ստուգելիս, պետք է մի քանի տեղից փորձել՝ սխալներից խուսափելու նպատակով, քանի վոր տարբեր տեղերում հասած խտը նույն դրության չի լինի: Կիսով չափ չորացած խտը պետք է տեղափոխել վաղորդ պատրաստված տեղը և դեղել: Դեղերի տակ պետք է լցնել դարման կամ այլ չոր նյութեր, հողի խոնավությունից պաշտպանելու համար: Դեղերի մեծությունը պետք է լինի՝ շատավիզը 1,5—2 մետր, իսկ բարձրությունը մեկ ու կես,

կամ յերկու անգամ ավելի: Դասավորվող խոտն արտաքինից վոչ մի կաթիլ խոնավություն չպետք է ունենա: Դեղի սարքելը պետք է կատարել շատ մեծ խնամքով. խոտը դասավորելիս պետք է լցնել բարակ շերտով և ուժեղ կերպով տրորել: Վոչ մի դատարկ տեղ չպետք է թողնել դեղի մեջ, վորովհետև կարող է դրանից հետագայում խոտի մեջ սկսել փտելու պրոցեսը: Դեղի գազաթին պետք է տալ սուր կոնի ձև, վորպեսզի տեղացող անձրևները հոսեն դեպի ցած:

Դիզված խոտը յերբ վոր սկսում է տաքանալ, նշանակում է, վոր խոտի մեջ առաջանում է խմորման պրոցեսը: Այդ խոտի տաքացումն սկսվում է դանդաղ, հասնելով շատ բարձր աստիճանների, վորը տևում է 15—20 ուր, յերբեմն և ավելի: Դրանից հետո խոտը կամաց-կամաց հովանում է, վորը տևում է շատ յերկար, մինչև մեկ ամիս և ավելի: Ահա այդ պրոցեսից հետո ստացվում է գորշ խոտը, նրա գույնը լինում է գորշ, կամ շագանակադույն, իսկ յերբեմն ել սև գույնի:

Գորշ խոտն ունենում է շատ դուրեկան հոտ, վորը հիշեցնում է նոր թխված հացի հոտը: Անասուններն այդպիսի խոտն ուտում են մեծ ախորժակով. կան կարծիքներ, վոր այդ խոտից բարձրանում է անասունների կաթնատվությունը: Գորշ խոտի պատրաստումն ունի այն նշանակությունը, վոր անձրևոտ յեղանակին քաղված խոտը փրկում ենք փչացումից և մյուս կողմից՝ տնտեսում ենք մեծ քանակությամբ աշխատող ձեռքեր:

Գորշ խոտը միզ մոտ յերբեմն պատրաստվում է անկախ մեր ցանկությունից, յերբ խոտը հավաքելիս լրիվ չորացած չի լինում. գորշ խոտ հաճախ է պատահում մեր լեռնային շրջաններում, յերբ սպառնացող անձրևների հետևանքով խոտի հավաքելն արագ է կատարվում: Պետք է հետևել դեղերի ջերմությանը. յերբեմն դեղերի ջերմությունն զգալի չափով բարձրանում, ապա բռնկվում է՝ մեծ վնաս հասցնելով տնտեսությանը:

5. ԽՈՏԻ ՊԱՇԵԼԸ

Շատ մեծ ուշադրություն պետք է դարձնել խոտի պահելու վրա, այսպես նա կարող է կորցնել իր ամբողջ արժեքն անգամ, յեթե ժամանակին հավաքված ու լավ ել չորացրած լինի: Դրա համար անհրաժեշտ է չորացնելուց հետո, վորքան կարելի յե, շուտ տեղափոխել դիզելու կամ այլ կերպ պահելու համար, քանի վոր

անձրևների տակ ընկնելուց հետո՝ չորացրած պատրաստի խոտը շատ արագ է սկսվում քայքայվել ու վոչնչանալ:

Համողվելու համար, վոր խոտն արդեն պատրաստ է, պետք է վերցնել մի քանի տեղից մի-մի փունջ խոտ, յեթե այդ խոտերը շոշափելիս խշոց են հանում և սեղմելուց կտրվում են բույսերը կամ ձեղքվում, ուրեմն կարելի յե հաշվել չորացած, իսկ յեթե բույսերը չեն կտրտվում, ապա նրանց մեջ դեռ կա ավելորդ խոնավություն, վորը՝ վորոշ ժամանակ արևի տակ թողնելով, պետք է գոլորշիացնել:

Մինչև խոտի դիզելն անհրաժեշտ է մի քանի աշխատանքներ կանոնավոր կատարել. այն է՝

ա) Սայլերի վրա բարձելիս խոտը պետք է խնամքով դասավորել, վորպեսզի չջարգվեն տերևներն ու ծաղիկները (մանավանդ թիթեռնածաղիկներից կաղմված խոտը) և այնպես բարձել, վոր փոխադրելիս ձանապարհին չթափվի:

բ) Մարգագետնից խոտը փոխադրելիս պետք է հետևել, վոր սայն անընդհատ մարգագետնի միկենույն տեղով—ճանապարհով չդնա-վերագառնա, վորովհետև դրանից այդ տեղերում անիվերի և ձիերի ու յեղների վոտների տակ բուսականությունը վոչնչանում է, խոտը խտանում է և բացի այդ, առաջանում են փոսեր, անձրևների ժամանակ լցվում ջրով—լճանում ու աճում է անցանկալի բուսականություն, վորի հետևանքով մարգագետիններում տարածվում են մոլախոտերի սերմեր:

գ) Դեղերը սարքելու համար պետք է ընտրել այնպիսի տեղեր, վորտեղ հողն ավելի քիչ խոնավություն է պարունակում իր մեջ (չոր տեղեր), վորովհետև թաց տեղերում դիզված խոտն սկսում է հողից ծծել ջուր ու այդպիսով հիմքից սկսում է փտել: Դեղերի համար ընտրվող տեղերում անհրաժեշտ է նախորդ փուլ վորոշ քանակությամբ չոր նյութեր (հին խոտ կամ դարման, տախտակի կտորներ, չորացած ծառերի ճյուղեր, կամ ուրիշ նյութեր) կամ պատրաստի հատուկ տախտակյա հատակներ:

Դեղ դնելիս խոտը պետք է լինի բոլորովին չոր. յեթե նուր-նիսկ ցողից առաջացած խոնավություն կա, այդպիսի խոտը պետք է չորացնել, ապա սկսել դիզել. խոտը յերբեք չպետք է դիզել արևը մայր մտնելուց հետո կամ առավոտը շատ վաղ, յերբ իջնում է ցողը:

Դեղի արտաքին մասում պետք է դասավորել ամենավառ վորակի խոտը, քանի վոր միշտ ել արտաքին մասում յեղած խոտը

ձյունից ու անձրևից փչանում ե և սևանում, իսկ ամենայա՛վ խոտը պետք է լցնել դեզի կենտրոնական մասում, վորպեսզի պահպանվի առանց վնասի:

Դեզերը պետք է սարքել կլոր, կամ յեռանկյունի բուրդի նման, կամ յերկարաձև (սկիրդ), նայած տնտեսութ՛յան մեջ յեղած խոտի քանակութ՛յան. յեթե քիչ է, պետք է սարքել յեռանկյունի բուրդերով, իսկ շատ լինելու դեպքում, յերկարաձև (սկիրդ): Սկիրդերը ավելի նպատակահարմար են, վորովհետև, ինչպես գիտենք, մեծ դեզերը համեմատաբար ավելի փոքր արտաքին մակերես են ունենում, քան թե փոքր դեզերը և այդ պատճառով մեծ դեզերից ավելի քիչ քանակութ՛յամբ խոտ է փչանում, քան փոքր դեզերից: Լեռնային մարգագետիններից և անտառներից հավաքված խոտը նպատակահարմար է դասավորել փոքր դեզերում, վորովհետև այդ խոտը շատ հաճախ կաղմված է լինում շատ կարճ բարձրութ՛յուն ունեցող բույսերից, վորի պատճառով դրանցից զրված դեզերը շատ հեշտութ՛յամբ կարող են քանդվել ուժեղ քամիներից կամ խոտը նստելուց:

Դեզերի մեջ խոտն ընդհանրապես պետք է ամուր սեղմել վորպեսզի արտաքին ողը հեշտութ՛յամբ չկարողանա թափանցել իսկ կողերն ել լավ սարքել ու թեքութ՛յունը պահպանել հավասարաչափ, վորպեսզի փոսեր չառաջանան, դեզերի մեջ ջուր չթափանցի, այլ անձրևների ու ձյան ջուրը հեշտութ՛յամբ հոսի ցած:

Քանի վոր մեր կոլտնտեսութ՛յուններն ու խորհանտեսութ՛յուններն ունեցած խոտի մեծ պաշարը պահում են բացողյա դեզերի միջոցով, անհրաժեշտ է ղիղելու ընթացքում հետևյալ միջոցառումները կիրառել:

Սոտի դեզերը դասավորել իրարից հեռու, վորպեսզի հրդեհվելու դեպքում բոլոր դեզերը չայրվեն: Այն դեզերը, վորոնք զրտնվում են գյուղում, պետք է դասավորել իրարից 5—10 մետրից վոչ մոտ, իսկ գյուղից դուրս գտնվող դեզերը՝ (կալերում կամ դաշտերում) իրարից՝ մոտավորապես 20 մետր տարածութ՛յան վրա: Մեզ մոտ շատ գյուղերում խոտը պահում են տներում, տանիքների վրա. պետք է ասել, վոր պահելու այդ ձևը շատ վտանգավոր է և վնասակար. նախ այն տեսակետից, վոր կարող է այրվել քանի վոր կրակն ավելի մոտ է լինում և յերկրորդ՝ վոր խոտը չափազանց շատ է չորանում, փոշիանում, վոր վոչ միայն խոտի վորակն է վատանում, այլ և վատ է անդրադառնում թե մարդկանց և թե անասունների առողջութ՛յան վրա: Շատ տեղերում,

վորտեղ կլիման խոնավ է, կամ թե ստացվող խոտը քիչ լինելու պատճառով անհրաժեշտութ՛յուն է դառնում ամբողջ խոտն առանց կորուստի պահպանել, խոտի պահելու համար կարելի յե ողտագործել այսպես կոչված խոտի ծածկերը (կամ սարայները): Սոտը ծածկերի տակ դասավորելու դեպքում չի պահանջում շատ մաքուրակրկիտ աշխատանք, ինչպիսին հարկավոր են դեզեր դնելու դեպքում. այս դեպքում խոտի կորուստը շատ աննշան կարող է լինել: Սոտը պահելու համար նման ծածկերը հիմնական կառուցումներ չեն պահանջում: Մեր անտառով հարուստ շրջաններում հեշտութ՛յամբ կարելի յե միանգամայն պարզ փայտյա սարայներ կառուցել, վորոնք այնքան ել մեծ ծախս չեն պահանջի տնտեսութ՛յունից: Սոտի ծածկոցները կարելի յե կառուցել մի քանի տեսակ, նայած տնտեսութ՛յան մեծութ՛յանը և հնարավորութ՛յուններին: Դրանք կարող են լինել այնպես, վոր ունենան միայն տանիք. իսկ մնացած կողմերը բաց կարող են լինել և այնպիսի ծածկոցներ, վորոնք ունենան վոչ միայն տանիք, այլ և կողքի պատեր: Առաջին տեսակի ծածկոցը թեպետ եժան է նստում, բայց նրա մեջ ղիղված խոտը մթնոլորտային տեղումների և քամիների հետեանքով ավելի շատ է յենթակա վնասների: Դրա համար ծածկերի կազուցման ժամանակ հարկավոր է այնպես անել, վոր ծածկոցն ուղղված լինի դեպի այն կողմը, վորտեղից ավելի շատ են լինում այդ մթնոլորտային տեղումները:

Յերկրորդ տիպի ծածկը պետք է ունենա մի քանի լայն դռներ, վորպեսզի խոտով բարձված սայլերը ուղիղ ներս մտնեն և դատարկելուց հետո, առանց շրջադարձ կատարելու, դուրս գան մյուս դռնից: Այդ շենքերն ընդհանրապես պատրաստվում են վոչ թե քառակուսի ձևի, այլ յերկարաձև-քառանկյունի 2—3 մետր հողից բարձր, դռների մոտ սայլերի համար սարքերով թեք ճանապարհ: Սոտը պետք է դասավորել մի վորեկ կողմից կանոնավոր, ապա թե վոչ խառնվում են իրար հետ և ղժվար է լինում ողտագործելու ժամանակ հանել: Առաջին տեսակի հասարակ կառուցումների տակ դասավորված խոտը չպետք է կողքերից դուրս ցցված լինի, այլ ամբողջ խոտը պետք է պաշտպանված լինի տանիքով (ծածկոցով), այսպես այդ դուրս ցցված մասերը կարող են փտել:

Ինչպես դեզերում, այնպես ել հատուկ ծածկոցների տակ խոտը դասավորվելուց միքանի (5—7) որ հետո պետք է ստուգել, թե արդյոք շատ չի տաքացել. յեթե ներսի մասից է տաքացել, ան-

հրաժեշտ ե անմիջապես քանդել և չորացնել. այս հանգամանքն աչքաթող անելու դեպքում խոտը կարող ե ամբողջապես այրվել—ինքնաբռնկման միջոցով:

Սոտը տնտեսութեան մեջ շատ յերկար ժամանակ չպետք ե պահել. վորքան հին ե խոտը, այնքան նա աղքատ ե սննդարար նյութերից ու անպետք ե դառնում իբրև կեր, այդ պատճառով այն խոտը, վորը մեկ տարուց ավելի յե պահվում, ցանկալի չե, յերբեմն ել ֆլասակար: Բացի այդ, հին խոտն իր մեջ պարունակում ե մեծ քանակութեամբ խոտի փոշի, վորն ինչպես վերևում իմացանք, ֆլասակար ե դառնում անասունների համար: Սորհատնտեսութեաննեղում և կոլտնտեսութեաննեղում առանձնացվող խոտի անձեռնմխելի ֆոնդը, յեթե նույն տարին չի ոգտագործվել, ապա հաջորդ տարին անպայման պետք ե վերանորոգվի, այսինքն՝ անձեռնմխելի ֆոնդի հին խոտը տրվի անասուններին ձմեռվա սեզոնի սկզբին, նրա փոխարեն նոր բերքից անհրաժեշտ քանակութեամբ խոտ առանձնացնել՝ վերականգնելով անձեռնմխելի ֆոնդը:

5. ԽՈՏԻ ՄԱՍԼԵԼԸ

Չորացած խոտն իր քաշով շատ թեթև ե ու ծավալով մեծ տեղ ե բռնում, վորի հետևանքով մի տեղից մյուս տեղը փոխադրելը շատ դժվար ե, մանավանդ յերբ անհրաժեշտ ե լինում մեծ քանակութեամբ փոխադրել հեռու տեղ: Մյուս կողմից՝ նկատի առնելով, վոր յեթե տնտեսութեան խոտը շատ ե, նրա պահելը դժվար ե դեղերում, իսկ հատուկ պահեստներ կամ ծածկոցներ կառուցելը յերբեմն մեր տնտեսութեաննեղի ուժերից վեր ե, ապա միակ յեղքը ֆնում ե խոտի մամլելը:

Մամլած խոտի արտադրութեան առաջին տարիներին ազգաբնակչութեանը և նույնիսկ շատ մասնագետներ մոտենում եյին շատ սկեպտիկորեն (անհավատ), վոր իբր թե խոտը մամլելուց հետո կկորցնի իր սննդարար նյութերի խոշոր մասը և վոր անասուններն այդ խոտը չեն ուտի, բայց այդ կասկածը շատ շուտ փարատվեց, յերբ փորձը ցույց տվեց, վոր լավ մամլելուց խոտը վոչ միայն կորուստ չեք տալիս, այլև նա ավելի յերկար ժամանակ եք պահպանում իր մեջ սննդարար նյութերը, քան թե դեղերի ու ծածկոցների տակ պահված խոտը: Մամլած խոտը հարմար ե նաև այն տեսակետից, վոր նա լինում ե «հակ»-երով, վորի հաշվի

առնելը բավականին հեշտ ե, վորը շատ կարևոր ե մեր պլանային տնտեսութեան պայմաններում: Սոտի մամլելը կատարվում ե հատուկ մեքենաների միջոցով, վորոնք կոչվում են մամլիչներ: Կան տարբեր տեսակի խոտ մամլիչ մեքենաներ, վորոնց կարելի յե բաժանել յերկու հիմնական տիպի՝ մեքենաներ, վորոնք աշխատում են ընդմիջումներով, և մեքենաներ, վորոնք աշխատում են անընդհատ: Ընդմիջումով աշխատող մեքենաների վրա միանգամից լցվում ե անհրաժեշտ քանակութեամբ խոտ, վորը սեղմվում ե և կապվում հակը, ապա դուրս ե հանվում և սկսվում յերկրորդ հակի մամլելը և այդպիսով մամլվում ե մեկական հակերով: Իսկ անընդհատ կերպով աշխատող մամլիչների վրա խոտը լցվում ե առանց ընդմիջումների, սեղմվում ե շերտերով և հակերն ել կապվում ու դուրս են գալիս անընդհատ մամլելու պրոցեսում: Ըստ մամլիչ մեքենաների համար ոգտագործվող շարժիչների՝ մամլիչները կարելի յե բաժանել յերեք տեսակի՝ ձեռքի, ձիու և մեքենայական (չրային, գոլորշիով, ներքին այրման և էլեկտրական):

1. ՁԵՌՔԻ ՄԱՍԼԻՉՆԵՐ

Սրանք փայտյա արկղներ են խոտը սեղմելու շարժվող հատակով կամ տանիքով: Հենց այդ մասով ել տարբերվում են իրարից: Այդ մամլիչների մեջ մեկ հակի խոտը մամլվում ե միանգամից:

Ձեռքի մամլիչներով աշխատանքը կարելի յե բաժանել չորս մասի՝ առաջին—խոտի դասավորումը, վորը կատարվում ե հետևյալ կերպ. արկղի մեջ բանվորը լցնում ե խոտը, իսկ մյուս բանվորը վոտներով տրորում. յերկրորդ աշխատանքը խոտի սեղմելն ե, վորը կատարվում ե տանիքի կամ հատակի մոտեցումով (շատ տարբեր տեսակի մեխանիկական ուժի ոգնութեամբ). յերրորդ աշխատանքն ե՝ հակերի կապելը յերկաթալարերով, վորը կատարվում ե այն ժամանակ, յերբ կողքի պատերը բացում ենք: Յեկ վերջապես չորրորդ աշխատանքը՝ դա հակերի հանելն ե մամլիչից, վորը կատարվում ե վերևի կամ ներքևի պատերը հանելուց հետո:

Ձեռքի մամլիչներից ամենատարածվածներն են Ինգերզոլի և Գիտոնի մամլիչները, վորոնք իրարից տարբերվում են հետևյալով. Ինգերզոլի մամլիչը սեղմելը կատարում ե վեր բարձ-

բացող հատակի միջոցով, իսկ Գիտոնինը, ընդհակառակը— դեպք-
ցած իջնող տանիքով:

Ձեռքի մամլիչների արտադրողականութունն այնքան ել
մեծ չե. մեկ բանվորական որվա ընթացքում (10 ժամ) կարելի
յե մամլել 40—50 ցենտներ: Ձեռքի մամլիչն աշխատեցնելու հա-
մար պետք է աշխատեն առնվազն 4 բանվոր: Ձեռքի մամլիչները
միջոցով մամլած խոտն այնքան ել խիտ չի լինում, ամենից շատ
120—130 կիլո մեկ խորանարդ մետրի մեջ: Մամլած խոտի խը-
տութունը և հակերի ²ձևը շատ խիտ կերպով կախված է խոտի
հավասարաչափ (ցնելուց և սեղմելուց):

2. ԱՆՐՆԴՆԱՏ ԱՇԽԱՏՈՂ ՄԱՄԼԻՉՆԵՐ

Անընդհատ աշխատող խոտի մամլիչները շատ խիտ տար-
բերվում են ընդհատ աշխատող մամլիչներից, թե իրենց աշ-
խատանքի ընույթով և թե աված արդյունքներով: Անընդհատ
աշխատող մամլիչներն աշխատում են ձիու կամ վորսե մեխանի-
կական ուժի միջոցով:

Անընդհատ աշխատող մամլիչն ունի հետևյալ կազմու-
թյունը.— ընդունիչ մասում լցվում է խոտը վոչ մեծ բաժին-
ներով: Այստեղից հատուկ սեղմիչի միջոցով խոտը հըրվում է
մամլիչ կամերան, վորտեղ և սեղմվում է: Ստոր սեղմվում է
փոքր բաժիններով, այդ պատճառով մամլվում է ավելի ուժեղ
կերպով, քան ձեռքի մամուլով մամլելիս: Ստոր սեղմվելն այստեղ
կատարվում է այն ձևով, վոր մամլվող խոտի առաջ գտնվող խոտի-
հակը ցույց է տալիս մեծ դիմադրութուն դուրս գալու ժամա-
նակ: Դիմադրութունը շատանում է այն պատճառով, վոր հակերի
դուրս գալու մասն անցքի մոտ ավելի նեղ է, քան սեղմվելու
տեղը: Այդ մասն ունի վորոշ հարմարութուն, վորի միջոցով կա-
րելի յե լայնացնել կամ նեղացնել անցքը, նայած ինչ խտության
մամլած խոտ ենք ցանկանում ստանալ: Յերը դիմադրութունն
ավելի շատ է լինում քան թե սեղմիչի ուժը, խոտը մամլվում է,
իսկ յերը սեղմիչը հաղթահարում է, այդ ժամանակ առաջ է շարժ-
վում խոտի այն մասը, վոր լինում է սեղմիչի առաջ: Յերը վոր
սեղմիչը հետ է քաշվում, խոտի ամբողջ մասսան կանգ է առնում
իր տեղում, հատուկ կողային փոքր սեղմիչներով: Հակերը հաս-
նելով ցանկացած յերկարության, իրարից անջատելու համար
հարկավոր է դնել նրանց միջև այսպես կոչված բաժանող տախ-

տակներ: Այդ ժամանակամիջոցում մամլելու պրոցեսը բոլորովին
կանգ չի առնում, այլ բաժանող տախտակի հետևից սեղմիչը տա-
լիս է խոտի նոր բաժին և առաջ մղում խոտի հետ մյասին նաև
բաժանող տախտակը: Վորոշ տիպի մեքենաների վրա բաժանող
տախտակը դնելու մոմենտը բաց չթողնելու համար կան սարք-
ված հատուկ զանգակներ, վորոնք ժամանակին զանգահարում են:
Բաժանող տախտակներն արտաքին շերտից ունենում են անցքեր,
վորոնց մեջ ասեղի միջոցով անց է կացվում յերկաթալարը, հա-
կերը կապելու համար:

Ձիու միջոցով աշխատող խոտի մամլիչները լինում են յեր-
կու տեսակ, կիսաշրջանավոր և լրիվ շրջանավոր: Առաջին տիպի
մամլիչների աշխատելու ժամանակ ձիերն սկզբից գնում են մի
կողմ, կատարելով կես պտույտ, ապա մյուս կողմ (հետ), նորից
կատարելով կես պտույտ և այդպես անընդհատ ամբողջ սըը, վորը
շատ շուտ հոգնեցնում է ձիերին և անըբադառնում է արտադրո-
ղականության վրա, վորի հետևանքով 10 ժամ բանվորական որվա
ընթացքում մամլվում է 50—60 ցենտներ խոտ, իսկ շրջանավոր
տիպի մամլիչներն աշխատեցնելու համար ձիերն անընդհատ միև-
նույն կողմն են պտտվում, վորն անկասկած ավելի քիչ կհոգ-
նեցնի. այս դեպքում արտադրողականութունը նույն 10 ժամվա
ընթացքում հասնում է 80—90 ցենտների. հակերի խտությունը
մեկ խոր. մետրում հասնում է մինչև 270 կիլոյի. այդ մամլիչ-
ներն աշխատեցնելու համար պահանջվում է 2 ձի և 6 մարդ:
Բանվորներն ոգտագործվում են հետևյալ կերպ. մեկը լցնում
է խոտը սեղանի վրա, յերկրորդն ուղղում է խոտը կամերայում
ընդունելու համար, յերրորդ և չորրորդը կապում են հակերը,
հինգերորդը՝ հակերը տանում է մյուս կողմը, իսկ վեցերորդը՝
քշում է ձիերին:

Ձիու միջոցով աշխատող մամլիչները հարմարեցված են
այնպես, վոր յեթե ցանկանանք ոգտագործել ուրիշ վորսե մեխա-
խանիկական շարժիչի միջոցով, անհրաժեշտ է հիմնովին վերա-
նորոգել: Այդ պատճառով տնտեսության համար մամլիչ ընտրի-
լիս, պետք է նկատի ունենալ, թե ինչ շարժիչով պետք է աշխա-
տեցնել ավյալ մեքենան, վորպեսզի կարիք չլինի վերանորոգելու:
Բացի ձիու միջոցով աշխատող մամլիչներից, գյուղատնտե-
սական պրակտիկայում մենք շատ հաճախ հանդիպում ենք այլ
տեսակի մամլիչների, վորոնք աշխատում են մեքենայական ուժով
(շոգեմեքենաներով, ներքին այրման մեքենաներով, տրակ-

տորի կամ դինամոյի միջոցով և այլն): Մեքենայական մամլիչները, յեթե զրանք չեն մեքենայացված նաև խոտը լցնելու, հակերը կապելու համար և այլն, ունեն շատ պարզ կազմութիւն: Մեկ մեքենայական մամլիչը պահանջում է 5—6 ձիու ուժի կարողութեան շարժիչ մեքենա: Մեքենայական շարժիչներով մամլիչներն աշխատեցնելու համար պահանջվում է 5—6 բանվոր, չհաշված նրանց, վորանք աշխատում են շարժիչների վրա: Մամլելու խտութիւնն այս դեպքում հասնում է մինչև 280 կիլո մեկ խորանարդ մետրին:

Մեքենայական մամլիչներով խոտը մամլելու հետ միասին հարկավոր է մեքենայացման յենթարկել նաև մյուս բոլոր աշխատանքները՝ լցնելը և այլն, վորովհետև շատ հաճախ մեքենայի արագ աշխատելու պատճառով՝ բանվորները չեն կարողանում հասցնել խոտի լցնելը, վորի հետևանքով մեքենան վոչ միայն պարագուրդ է տալիս, այլ և ավելի շուտ են փչանում նրա առանձին մասերը, իսկ անհավասարաչափ լցնելուց հակերը դուրս են գալիս վոչ կանոնավոր՝ մի կողմը լայն, մյուսը նեղ և այլն, վորը նույնպես խոշոր նշանակութիւն ունի պահելու և տեղափոխելու դեպքում:

6. ԽՈՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ոտոր գնահատելիս պետք է նկատի ունենալ գլխավորապես հետևյալ հանգամանքները՝ խոտի բուսաբանական կազմը, գույնը, հոտը, փոշու քանակութիւնը և քանի տարվա խոտ է:

Բուսաբանական կազմը վորոշելու համար շատ կարևոր է իմանալ խոտի մեջ յեղած խոտազգիների, թիթեռնածաղիկների, այլախոտերի և վնասակար—թունավոր բույսերի քանակութիւնը:

Վորքան շատ լինի խոտազգիների և թիթեռնածաղիկների քանակութիւնը տվյալ խոտի մեջ (տոկոսային հարաբերութեամբ) և պակաս լինեն այլախոտերն ու թունավոր—վնասակար բույսերը, այնքան խոտը վորակով բարձր կլինի և ընդհակառակը: Այս դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև առանձին տեսակի բույսերը, վորովհետև խոտազգիները խմբի մեջ կան նաև այնպիսի բույսեր, վորոնց մեծ չափով ներկայութիւնը խոտի մեջ կարող է փչացնել նրա վորակը, հատկապես անհրաժեշտ է հաշվի առնել վնասակար տեսակները, քանի

վոր զրանցից մի քանի թունավոր տեսակների գոյութիւնը կարող է ամբողջ խոտի արժեքը կորցնել:

Խոտի գույնը լավ հատկանիշ է նրա վորակը վորոշելու համար: Ոտտազգիներից ժամանակին հավաքված լավ խոտը պետք է ունենա կանաչ գույն, թիթեռնածաղիկներից կազմված խոտը պետք է լինի գորշ-կանաչագույն, իսկ առվուտի խոտը՝ վառ կանաչագույն: Գորշ, սև և դեղին գույն ունեցող խոտերը ցույց են տալիս, վոր խոտի չորացումը կատարվել է անձրևոտ յեղանակին և այդ պրոցեսը տեղի յե ունեցել յերկար ժամանակ, հետևապես խոտը պետք է հաշվել վորակով ցածր:

Լավ խոտը պետք է լինի հոտավետ յեղ ղուրեկան: Յեթե խոտն ունի բորբոսի կամ նեխվածի հոտ, պարզ է վոր փչացած է:

Շատ հաճախ խոտի մեջ լինում է փոշի. այդ փոշին վոչ այլ ինչ է, յեթե վոչ սոււնկերի և բակտերիաների սպորներ (սելմեր), վորոնք զարգանում են խոտի վրա շնորհիվ այն հանգամանքի, վոր խոտը հավաքվում է խոնավ տեղում: Այդպիսի խոտը շատ վատ է անդրադառնում անասունների առողջութեան վրա, առաջացնելով մարսողութեան անկանոնութիւն և ուժեղ հազ:

Ոտոր գնահատելու համար կան մի շարք միթոզներ, վորոնք գերծ չեն թիրութիւններից. զրանք միայն վորոշ փորձեր են ներկայացնում մոտենալու, իսկոկան շկալաներ մշակելու. դրանցից մենք կրեքենք յերեքը՝ Լանգետալի, Վիտամակի և պրոֆ. Բոդդանովի:

1. ԼԱՆԳԵՏԱԼԻ ՇԿԱԼԱՆ

Հիմնված է գլխավորապես խոտակազմի բուսաբանական կազմութեան վրա և ընդունում է յերեքական թվանշան, բույսի հինգ ֆակտորների համար:

1. Խոտազգիների կազմութիւնը.—Քաղցր խոտազգիների համար նշանակում է 1 թվանշանը, թիթեռնածաղիկների հետ խոտնուված քաղցր խոտազգիներին նշանակում է 2 թվանշան և զուտ թիթեռնածաղիկներին նշանակում է 3 թվանշանը:

2. Խոտազգիների վորակը.—1-ին տեսակի խոտազգիներին տալիս է 1 թվանշանը, 2-րդին՝ 2, և այն խոտազգիներին, վորոնց մեջ գրեթե չկան լավ խոտազգիներ՝ նշանակում է 3:

3. Թիթեռնածաղիկների քանակութիւնը.—Թիթեռնածաղիկներէից շատ լինելու դեպքում նշանակում է 1 թվանշանը, ավելի

պակաս լինելու դեպքում՝ 2 և դրանց չլինելու կամ քիչ լինելու դեպքում՝ 3:

4. Կոես ցողունավոր բույսերի վերաբերմամբ.—Բոլորովին չըլինելու կամ աննշան չափով լինելու դեպքում նշանակում է 1, բավականաչափ լինելու դեպքում՝ 2 և շատ լինելու դեպքում՝ 3:

5. Վնասակար բույսեր.—Դրանց չլինելու դեպքում տրվում է 1 թվանշանը, քիչ լինելու դեպքում՝ 2 և շատ լինելու դեպքում՝ 3:

Բոլոր հինգ ֆակտորների թվանշանները գումարելու միջոցով ստացվում է խոտի գնահատումը: Վորքան ավելի թվանշան ստանա խոտը, այնքան նա վորակով վատը կլինի: Ամենայնով խոտը կստանա 5 թվանշանը, իսկ ամենավատը՝ 15: Այդ գնահատման միջոցով Լանդեստայլը խոտերը բաժանում է մի քանի տեսակի:

- 1-ին տեսակի խոտը . . . 5—6 թվանշանով.
- 2-րդ » » . . . 7—8 »
- 3-րդ » » . . . 9—10—11 »
- 4-րդ » » . . . 12—13 »
- 5-րդ » » . . . 14—15 »

Հիմնվելով միայն բուսաբանական կազմի վրա և վորոշելով թվանշանների հասարակ գումարով, նման յեղանակը չի կարելի համարել կատարելագործված, այլ կարելի յե ընդունել վորպես ամենապարզ և քիչ ճշտությամբ վորոշող շկալա:

2. ՎԻՏՏՄԱԿԻ ՇԿԱԼԱՆ

Այս շկալան նույնպես հիմնված է թվանշանների միջոցով գնահատելու վրա, բայց նախատեսում է ավելի մանրամասն գնահատումը:

- 1. Քաղցր խոտազգիների Ամբողջովին, կամ համարյա ամբողջովին թթու խոտազգիներ 1 թվ.
- Այդ խոտազգիները միջին քանակությունն են կազմում 2—5
- Ամբողջովին, կամ համարյա ամբողջովին քաղցր խոտազգ. 6—10

- 2. Քաղցր խոտազգիների վորակը Ամբողջովին կամ համարյա ամբողջովին վատ խոտազգ. 1—5
- Մեծ քանակությամբ միջին վորակի խոտազգիներ 6—10
- Ամբողջովին կամ համարյա ամբողջովին լավ խոտազգ. 11—20

- 3. Թիթեռնածաղիկների ֆանակուրյունը Թիթեռնածաղիկներ չլինելը կամ քիչ քանակությունը 1
- Թիթեռնածաղիկների միջին քանակությունը 2—4
- Թիթեռնածաղ. մեծ քանակությունը 5—8

- 4. Կոպիտ յեվ վնասակար խոտերի ֆանակուրյունը Կոպիտ և վնասակար խոտերի մեծ քանակությունը 1
- Կոպիտ և վնասակար խոտերի միջին քանակությունը 2—3
- Կոպիտ և վնասակար խոտերի քիչ քանակությունը 4—5

- 5. Քաղիյու ժամանակը Ուշ հավաքած 1
- Համեմատաբար ուշ հավաքած 5
- Ժամանակին հավաքած 10

- 6. Հավաքելու յեվ պահելու բնույթը Վատ հավաքած, վատ պահպանված, շատ փոշի, վատ հոտ և այլն 1
- Անձրևից թեթև թրջված, քիչ փոշի և թեթև վատ հոտ 2—5
- Լավ հավաքված և դուրեկան հոտ 6—10
- Բացառիկ արոմատ (լեռնային խոտ) 11—20

Այստեղ նույնպես բոլոր ֆակտորների տվյալները գումարելիս ստացվում է խոտի գնահատումը: Ամենաբարձր թվանշան ստացող խոտն ամենալավ վորակի յե հաշվում և ընդհակառակը քիչ թվանշան ստացած խոտը հաշվում է վորպես վատ վորակի վորի հետևանքով խոտը բաժանվում է 3 տեսակի:

- 1-ին տեսակի (լավ) 51—64 թվանշան
- 2-րդ » (միջին) 31—50 »
- 3-րդ » (վատ) 6—30 »

Այս մեթոդը, ինչպես և Լանդետալի մեթոդը, զգալի թերություններ ունեն, քանի վոր գնահատումը մեխանիկորեն է կատարվում, ինչպես պրոֆ. Բոգդանովն է ասում: Վորովհետև այս մեթոդով գնահատելիս յերբեմն մենք ստանում ենք անմիտ արդյունքներ, լրիվ հաշիվ չառնելով այն բոլոր հանգամանքները, վորոնք խիստ կապված են խոտի վորակի հետ՝ լավ հավաքելը, հավաքելու ձևերը և այլն:

ՊՐՈՑ. ԲՈԳԴԱՆՈՎԻ ՇԿԱԼԱՆ

Սոտի գնահատումն ըստ պրոֆ. Բոգդանովի շկալայի, բաժանվում է յերկու մասի՝ բուսաբանական կազմության և ընդհանուր հատկությունների գնահատումը:

ա) Բուսաբանական կազմության գնահատումը

Շատ լավ խոտերի (մարգագետնային, ցանովի և այլն) համար ընդունվում է միատեսակ և ամենաբարձր թվանշանը՝ 100 լավ խոտերի (անտառային) համար՝ 75, լավ ճահճային խոտերի համար՝ 50: Առանձին խմբերի բույսերն այս կամ այն տոկոսով պարունակելու դեպքում ստանում են հետևյալ թվանշանները՝

Մարգագետնային խոտ

Թթու խոտեր համարյա թե չկան (5 ⁰ / ₀ -ից պակաս) մինչև 40	
» » 5 ⁰ / ₀ —10 ⁰ / ₀ »	20
» » 10 ⁰ / ₀ —15 ⁰ / ₀ »	10
» » 15 ⁰ / ₀ -ից բարձր »	0
Թիթեոնածաղիկները շատ են (մինչև 35 ⁰ / ₀)	20
» » (» 25 ⁰ / ₀)	15
» » (» 15 ⁰ / ₀)	10
» » (» 5 ⁰ / ₀)	5

Անտառային և վոչ ցանկալի խոտեր համարյա չկան (5 ⁰ / ₀ -ից	
» » » » պակաս) նշան. մինչև	30
» » » » 5—10 ⁰ / ₀ »	15
» » » » 10—25 ⁰ / ₀ »	8
» » » » 25-ից ավելի »	8

Ցանկալի այլախոտեր, այնքան էլ շատ չեն մինչև	10
» » շատ, բավականին կոպիտ և վորակով այնքան էլ լավ չեն »	5
» » մինչև 33 ⁰ / ₀ կամ վատ	
» » տեսակի յե »	0

Ցանովի խոտ

Առհասարակ ցանովի խոտերը (առվույտ, յերեքնուկ և այլն) ստանում են ամենաբարձր թվանշանը 100

Անտառային խոտ

Թթու խոտեր համարյա թե չկան—նշանակվում է	90
» » (5-ից —10 ⁰ / ₀)	10
» » 15 ⁰ / ₀ -ից ավել	0
Թիթեոնածաղիկները շատ են	15
» միջին քանակությամբ են	8
» քիչ են	4
Ցանկալի այլախոտերը 33 ⁰ / ₀ վոչ ավել—նշանակվում է	20
Ցանկալի այլախոտերը միջին քանակությամբ	10
» » չափազանց շատ են և վատ վորակի	0

Թ ք ու խ ո ս

Լավ վորակի թթու խոտեր—նշանակվում է	30
Միջին » » » »	15
Վատ » » » »	0
Թիթեոնածաղիկները բավականին մեծ քանակութ	10
» միջին քանակությամբ	5
» քիչ »	1—5
Այլախոտեր, յեթե վատ չեն, վոչ շատ քանակությամբ, նշանակ	10

Այլախոսերը, միջին վորակի, քիչ քանակությամբ 5
 » յեթե վատ են 0

բ) Ընդհանուր հասկությունների գնահատումը

Ընդհանուր հատկությունների գնահատման շարքին պրոֆ-
 Բոգդանովը դասում է հասակը, հավաքելը, կոպիտ ցողունների և
 թունավոր բույսերի պարունակությունը:

Այս հատկությունները գնահատվում են այնպես, վոր թը-
 վանշանների ընդհանուր թվից (վորն ստացվում է բոս բուսա-
 բանական կազմության գնահատելիս), զեղջ է արվում վորոշ չա-
 փով, վորը ցույց է տրված ներքևում այն դեպքում, յեթե այս
 կամ այն հատկությունը վատ է արտահայտված:

Հավաքելը	յեվ Գիչ թե շատ վատ է . . .	զեղջ	$\frac{1}{4}$
պտեղելը	Վատ	»	$\frac{1}{2}$
	Շատ վատ	»	$\frac{4}{4}^*$
Հասակը	Բաղված է քիչ ուշացումով »		$\frac{1}{8}$
	Բաղված է ուշ	»	$\frac{1}{4}$
	Բաղված է շատ ուշ	»	$\frac{1}{2}$
Կոպիտ ցողունների	$50\%_0$ վոշ ավելի . . .	զեղջ	$\frac{1}{8}$
պարունակությունը	$10\%_0$ »	»	$\frac{1}{4}$
	» $25\%_0$ »	»	$\frac{4}{4}^*$
Թունավոր և կաս-	քիչ է	զեղջ	$\frac{1}{4}$
կածավոր բույսերի	շատ է	»	$\frac{1}{2}$
պարունակությունը	չափազանց շատ է	»	$\frac{4}{4}$

Պրոֆ. Բոգդանովի շկայան՝ վերևում բերված շկայաների
 հետ համեմատած, հանդիսանում է ամենալրիվը: Ստորի գնահա-
 տումն այս շկայայի միջոցով ավելի մոտ կլինի իրականություն,
 քան վերևում նշված մեթոդներով գնահատելու դեպքում:

Պրոֆ. Բոգդանովի շկայան առայժմ հանդիսանում է միակը
 և դրանով էլ ղեկավարվում են մեր Միությունը բոլոր տեղերում

Վերջին ժամանակներս մշակված է նաև պրոֆ. Լարինի կող-
 մից մի նոր շկայա, վորը վերոհիշյալ շկայաների հետ համեմա-
 տած թեև ունի վորոշ պարզեցումներ, բայց մենք չենք բերում

*) $\frac{4}{4}$ զեղջը համապատասխանում է վոշ թե խոտին, այլև իսկական
 դարմանին:

այն նկատառումով, վոր գործնականում դեռ այդ շկայան չի
 գործածվում և կարիք է զգում վորոշ ճշտումների:

7. ԽՈՏԻ ՔԱՇԸ ՎՈՐՈՇԵԼԸ

Մեր կուտնտեսությունների և խորհրտնտեսությունների հա-
 մար շատ կարևոր է իմանալ ունեցած խոտի չափը, վորի հիման
 վրա կարելի յի ճիշտ կերպով պլանավորել կերի ուսցիտնալ կազ-
 մակերպումը, մանավանդ ձմեռվա շրջանում: Շատ նազամ խոտի
 չափի մասին դադափար չունենալով, մենք ընկնում ենք յերկու
 ծայրահեղությունների մեջ, այն է՝ վորոշ տնտեսություններում
 ձմեռվա կեսին վերջանում է ամբողջ խոտի պաշարը: Իսկ մի այլ
 տնտեսության խոտը վոշ միայն բավարարում է մինչև արտա-
 յին սեզոնը, այլև խոշոր ավելցուկ է տալիս, վորը շատ անգամ
 փչանում է: Ստորի քանակություն վորոշելը հեշտացնում է նաև
 մեր մթերող կազմակերպությունների աշխատանքները, մանա-
 վանդ այնպիսի տեղերում, վորտեղ բացակայում են այն հարմա-
 բությունները, վորոնցով ճշգրիտ կերպով կարելի յի պարզել ամ-
 բողջ խոտի չափը:

Վերև թված հանգամանքները նկատի ունենալով, մենք ան-
 հրաժեշտ ենք գտնում կանգ առնել խոտի քաշը վորոշելու մի
 քանի ձևերի վրա:

Ստորի քաշը վորոշելը կատարվում է կամ ուղղակի կշռելով
 կշեռքների վրա, կամ ծավալը չափելու միջոցով և կամ մաժված
 խոտի հակերը հաշվելով:

Ստան ուղղակի քաշելու համար կան մի քանի տեսակ կը-
 շեռքներ. դրանցից ամենահարմարն են այն կշեռքները, վորոնք
 ամբողջ սայլը խոտով բարցած քաշում են, վորովհետև դրանց վրա
 կարելի յի կշռել միանգամից մեծ քանակություն խոտ և
 ճիշտ: Այդ կշեռքների վրա խոտը կշռվում է սայլի հետ միասին,
 ապա դատարկելուց հետո դասարկ սայլն և կշռվում առանձին,
 վորից հետո դատարկ սայլի կշիռը նախորդ կշեռից հանելով,
 ստացվում է խոտի մաքուր քաշը:

Ինչ վերաբերում է թևավոր մեծ կշեռքներին, դրանք հար-
 մար չեն, վորովհետև մեծ սայլերը նրանց վրա տեղավորել չի
 կարելի, իսկ փոքր սայլերով կշռելու դեպքում էլ անհրաժեշտ է
 լինում արձակել ձիերին կամ ընդհանրապես անասուններին,
 վորովհետև կշռելիս թևիկերը բարձրանում են, ուրեմն անասուն-

ները յեթե արձակված չեն լինում, կշիռը ճիշտ չի ստացվում: Մյուս բացասական կողմն ել այն է, վոր մեծ քանակությամբ կշառքաբեր դասավորելը մյուս թաթի վրա, նորից վերցնել և այդպես շարունակ՝ պահանջում է ավելորդ բանվորական ուժ:

Սոտի կշռի վորոշման մյուս յեղանակը ծավալի վորոշման միջոցն է. այս ձևն ունի խոշոր գործնական նշանակություն այն տեղերում, վորտեղ կշեռքներ չեն լինում, կամ թե դժվար է լինում այդպիսիներով ոգտվելը, մանավանդ այն ժամանակ, յերբ ցանկանում ենք սովխողներում կամ կոխողներում ունենալ խոտի կշռի նախնական ավյալները, կամ յերբ խոտը ընդունում ենք դեղերով հենց մարդագետիներում, կամ վերջապես յերբ անց ենք կացնում խոտի պահեստների ստուգում, վորի ժամանակ շատ դժվար կլինի ամբողջ խոտի պաշարն ստուգել ուղղակի կշեռլու միջոցով:

Սոտի քաշը վորոշելը դեղի, սկիբդի, կամ թե սայլի վրա յեղած ժամանակ կատարվում է ալդ խոտի մեկ խորանարդ մետրի քաշը բազմապատկելով ծավալի խորանարդ միավորների վրա: Պետք է ընդգծել, վոր խորանարդ մետր խոտի քաշը շատ տարբեր մեծության է լինում, բավականին շատ ու բազմազան պատճառներից: Որինակ՝ պետք է իմանալ, վոր մեծ դեղի մեջ յեղած խոտի մեկ խորանարդ մետրը ավելի ծանր է լինում, քան թե փոքր դեղից վերցրած մեկ խորանարդ մետր խոտը, վորովհետև առաջին դեպքում խոտն ավելի խիտ է լինում նստած դեղի մեջ շնորհիվ նրան, վոր ներքևի մասում ավելի շատ ճնշում է գործ դրվում: Սոնավ մարդագետիներից հավաքված խոտն ավելի ծանրը է, քան չոր կամ ցանովի մարդագետիներից հավաքած խոտը: Յեթե վերցնենք խոշոր բույսերից կազմված խոտը և մանր բույսերից կազմված խոտը, կտեսնենք, վոր նրանք իրենց ծավալով շատ տարբեր քաշի յեն լինում: Բացի այդ, խոտի քաշի վրա մեծ ազդեցություն է ունենում և այն հանդամանքը, թե յերբ է հավաքված՝ անձրեկոտ, թե չոր յեղանակին, ինչպես և չորացված, դիզված, խտությունն ու ժամանակը և ուրիշ այլ հանգամանքներ, վորոնք կապված են խոտի չորացնելու ու պահելու յեղանակների հետ:

Անհրաժեշտ է բերել մի քանի թվեր, ցույց տալու համար թե ինչպիսի խոշոր տարբերություններ են ստացվում խոտի քաշի մեջ տարբեր պայմաններում:

Չմալած խոտը	խորանարդ մետրի քաշը ցեմսետրով.
Կանաչ խոտ	3,0—3,5
Չոր խոտը խտրածերով	0,6—1,0
Նոր դիզված չոր խոտ	0,5—0,8
Դեղի մեջ մեկ ամսից հետո	0,7—0,9
Դեղի մեջ վեց ամսից հետո	0,9—1,1

Մալած խոտը	
Թույլ մալած	1,3
Միջակ մալած	1,5
Ուժեղ մալած	4,0—5,0

Գործնական նպատակների համար՝ շտապ կերպով կատարվող հաշվառման ժամանակ, մեկ խորանարդ մետր խոտի քաշը դեղի մեջ ընդունվում է 0,8 ցեմտներ, հետևաբար ամբողջ դեղի քաշը պարզելու համար պետք է 0,8 ցեմտները բազմապատկել դեղի ծավալի միավորների վրա: Քիչ փորձառություն ունենալու դեպքում կարելի յե սխալվել մինչև 10% -ի չափով:

Կոնաձև դեղերի ծավալը վորոշելու համար, անհրաժեշտ է իմանալ դեղի բարձրությունը և հիմքի տարածության չափը: Բարձրությունը վորոշվում է հետևյալ կերպ. բարձրանում են դեղի գագաթի վրա, հետը վերցնելով մի փոքր փայտ, վորի ծայրին կապվում է մի պարան. դեղի գագաթի վրա փայտը դնելով հորիզոնական այնպես, վոր պարանի ծայրը հասնի հողի մակերեսին, ապա չափում են պարանի յերկարությունը, վորով և ստացվում է դեղի բարձրությունը: Դեղի բարձրությունը կարելի յե չափել և առանց դեղի գագաթը բարձրանալու, այսինքն՝ պարանը գագաթի վրայից զցելով դեպի դեղի հակառակ կողմը: Պարանի յերկարությունը բաժանվում է յերկուսի և այդպիսով ստացվում է դեղի մի կողմի բարձրության չափը, վորից հանում են 0,7—1,5 մետր, նայած թե ինչ մեծության դեղ է: Վորքան թեք և բարձր է դեղը, այնքան վերևում ստացված թվից քիչ է հանվում: Դեղի բարձրությունը վորոշելու համար գոյություն ունի նաև մի յերրորդ յեղանակ: Դեղի գագաթի վրայից զցվում է պարանը դեպի հակառակ կողմը, չափվում է այդ և վերցվում նրա կեսը, վորը և կտա դեղի մի կողմի բարձրությունը a: Դրանից հետո չափվում է դեղի օջաղիձր, վորն արտահայտվում է յերկրաչափական Չք ֆորմուլայով և վորոշում են շտապվիդի մեծությունը, ապա վորոշվում

հ-ը (դեզի բարձրությունը) հետևյալ ֆորմուլայով $h = \sqrt{a^2 - r^2}$: Շառավիղը վորոշելու ժամանակ դեզի շրջագծի յերկարությունը վորթե բաժանում են 3,14 (շրջագծի յերկարություն հարաբերությունը տրամագծի), այլ պարզ լինելու համար բաժանում են 3-ի (ստացվում է տրամադիժը) և ապա 2-ի (ստացվում է շառավիղը): Դրանից հետո դեզի ծավալի չափն իմանալու համար պիտի է նիւմֆի մեկերեսը բազմապատկել բարձրության $\frac{1}{3}$ -ով: Ստացված ծավալը (խորանարդ մետրերով), ինչպես վերևում ասացինք, պետք է բազմապատկել 0,8 ցենսներով, վորից կստացվի տվյալ դեզի մեջ յեղած խոտի քանակը, արտահայտված կեիւով:

Դեզի ծավալն ավելի հասարակ ձեովով իմանալու համար կարելի է դեզի Երջագծի յերկարություն $\frac{1}{6}$ մասը բարձրացնել քառակուսի աստիճանի և ստացվածը բազմապատկել յերկարփայտի միջոցով չափված դեզի բարձրություն վրա և ստացվածը՝ ինչպես վերևում, այնպես էլ այստեղ, բազմապատկել են 0,8 ցենտների վրա: Այս ձևով ավելի քիչ է լինում ճշտությունը, բայց սխալն այնքան քիչ է, վոր դործնական շտապ նպատակներին համար ծավալը և ամբողջ դեզի քաշը վորոշելիս տալիս է մոտավորապես լրիվ պատկերը:

Պահեստներում կամ ծածկերի տակ յեղած խոտի քաշը ծավալով վորոշելու համար անհրաժեշտ է չափել պահեստի յերկարությունը, բարձրությունը և լայնությունը, ապա ստացած թվերը բազմապատկել իրար վրա: Պահեստի բարձրությունը չափվում է մինչև պատի բարձրությունը, իսկ նրանից բարձր, տանիքի գագաթի մոտ գտնվող խոտն առանձին է չափվում և այդ գումարն ավելացվում է բազմապատկումից ստացված գումարին: Այդպիսով ստանում ենք սվյալ պահեստի կամ ծածկի տակ գտնված խոտի ծավալը, վորը բազմապատկելով 0,8 ցենսների վրա, ստացվում է պահեստի կամ ծածկի տակ գտնված խոտի ամբողջ քաշը ցենսներով:

Նույն կերպ է կատարվում նաև սայլերի վրա բարձած խոտի քաշը վորոշելը, բայց այստեղ պետք է շատ զգուշ լինել, վորովհետև շատ հաճախ սայլերի վրա խոտը դասավորված է լինում վոր սեղմված, վորի հետևանքով ծավալը վորոշելու դեպքում մենք մեծ սխալներ ենք կատարում: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է սկզբում ստուգել, ապա կատարել ծավալի և քաշի վորոշելու աշխատանքը: Այս դեպքում ստուգում ենք սայլից կապված պարանը ուժեղ ձգելով. յեթե ձգելուց պարանը քաշվում է և թուլանում, ապա ուրեմն խոտը լավ չի սեղմված, ուրեմն և ծավալով

վորոշել խոտի քանակությունը չի կարելի, իսկ յեթե պարանը չի թուլանում, այդ դեպքում միանգամայն հնարավոր է այդ մեթոդով հաշվել խոտի ծավալը նաև սայլերի վրա:

1. ԽՈՏԻ ԲԵՐՔԸ ՎՈՐՈՇԵԼԸ ԶՔԱՂՎԱԾ ՎԻՃԱԿՈՒՄ

Շատ հաճախ կարիք է զգացվում խոտի քանակը վորոշել դեռ չքաղված վիճակում: Այդ ուղղությունը կատարված փորձերը թեպետ վիրջնականապես մեզ պարզ մեթոդ չեն տալիս, բայց և այնպես վորոշ հետաքրքրություն են շարժում, վորոնց հետ անհրաժեշտ է ծանոթանալ: Վ. Իլյինսկին Մոսկվորեցկու խոտատեխնիկայի բազայում կատարված փորձերից յեղնելով, առաջարկում է խոտի քանակի վորոշման համար հետևյալ մեթոդը:

Ամենից առաջ անհրաժեշտ է վերևից նայելով պարզել խոտակազմի լրիվ լինելը (այսինքն չկա արդյոք խոտակազմի մեջ բաց, բույսերով չծածկված տեղեր): Յեթե այդ հողի մեկ քառորդը չի ծածկված բուսականությամբ, ապա պետք է բերքի քանակությունը պակասեցնել մեկ քառորդով, յեթե կեսը չի ծածկված, պակասեցվում է կեսով չափ և այլն: Դրանից հետո պետք է չափել խոտակազմի բարձրությունը, հաշվելով փաստորեն քաղելու տեղից: Վերջապես վորոշում են խոտակազմի խտությունը, որավելով ներքևում բերված Մոսկվորեցկու խոտատեխնիկայի բազայում կազմված պարզ տախտակով:

Խմբեր	Բույսերի տեսակները	Շատ հարուստ	Հարուստ	Միջակ	Բարակ
1.	Ընդեղեցներ՝ յերեքնուկներ և վիկաներ	7	8	11	16
2.	Յողունավորներ՝ չալիբ, դաշտավեր, տիմոֆեև կա և ուրիշն.	8	9	12	18
3.	Կիտաքիակալվողներ՝ աղվեսապոչուկ, ցորենուկ, դաշտախոտ և ուրիշն.	8	10	13	19
4.	Թփակալվողներ՝ կերպիւն շյուղախոտ, վորնախոտ և ուրիշն.	9	10	14	21
5.	Ճիւմավորներ՝ բոշլա, սպիտակ մորուք և այլն	11	12	16	24

Յեթե ընդունենք, վոր յերեքնուկի (շատ հարուստ) բարձրությունը հալասար և 56 սանտիմետրի, այդ դեպքում 56-ը բաժանում ենք 7-ի և ստանում ենք 1 հեկտարի բերքի քանակությունը տոննհերով, այսինքն յերեքնուկը կտա 8 տոնն, բայց յեթե ընդունենք, վոր խոտակազմի 40% չի ծածկված բուսականությամբ, ապա բերքը կստացվի 4,8 տոնն մեկ հեկտարից: Այդպիսով այս աախտակի միջոցով հնարավոր և վորոշել խոտի բերքը դեռ չքաղված ժամանակ: Ի հարկե այդպիսի ձևով վորոշելը կլինի շատ պրիմիտիվ և մոտավոր, բայց քանի վոր ուրիշ մեթոդ առայժմս չկա, սա կլինի մի վորոշ ժամանակ ամենից գործածելին:

8. ԽՈՏԻ ՓԶԱՆԱԼՆ ՈՒ ՆՐԱ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Նախորդ գլուխներում խոտի վորակի մասին խոսելիս, մենք մի քանի անգամ շեշտել ենք, վոր խոտի չորացնելու, դիզելու բոլոր աշխատանքները պետք և կատարել ժամանակին և զգուշությամբ, վորպեսզի սննդարար նյութերի կորուստը քիչ լինի: Այժմ մենք մի փոքր ավելի մանրամասն կանդ կանենք խոտի փչանալու պատճառների վրա, վորոնց մի մասը վոշ թե կախված է մեր անմիջական մասնակցությունից, այլ տեղի յե ունենում մեզանից անկախ պատճառներով:

Սոտի փչացումն առաջացնող պատճառները շատ բազմազան են, բայց այդ բոլոր պատճառները կարելի յե բաժանել յերկու հիմնական խմբերի. առաջինը նրանք են, վորոնք առաջանում են միջնորոտային և կլիմայական ազդեցությունից, յերկրորդ՝ բույսերի հիվանդությունից և վնասատուներից:

Առաջին խմբի պատճառների ազդեցությունը խոտի փչանալու վրա կարելի յե դիտել նախ և առաջ տարվա տարրեր ժամանակներին:

Գարնան (մանավանդ մայիսյան) ցրտերն առաջացնում են կերարույսերի ցրտահարում, իսկ ցած ընկած տեղերում, վորտեղ դեռ մնացած է լինում ձյունը, բույսերն սկսում են նեխել ու փչանալ: Յեթե մայիսին անձրևներ չեն լինում, ապա կերարույսերի աճումը շատ դանդաղում է: Այդ բոլոր պատճառներն առանձնապես վատ են ազդում ընդհանրապես ընտանիքին պատկանող բույսերի վրա, իսկ խոտազգիները ավելի քիչ են վնասվում:

Ամառվա չորությունը և ուժեղ ջերմությունը նույնպես ազդում և բույսերի աճման վրա, վորովհետև այդ ժամանակ բույսերի ծաղիկներն ու տերևները չորանում են ու թափվում, իսկ ստացված բերքը քիչ և սննդարար լինում:

Ասեմար յեթե չափից շատ անձրևներ են լինում, բույսերի մեծ մասն սկսում է փտել ու չի տալիս նոր ցողուններ:

Չվնոր յեթե քիչ ձյուն է լինում, բազմամյա բույսերից շատերը ցրտահարվում են և այդ պատճառով նրանք զարնանը դժվար են բարձրանում, վորի պատճառով սպասվող բերքն զգալի չափով պակաս է լինում:

Բացի չորությունից, փտումից ու ցրտերից, կերարույսերը շատ են վնասվում նաև մի շարք այլ բնական պատճառական պատճառներից: Դրանցից անհրաժեշտ է հիշատակել՝ հեղեղները, յերբ հարթավայրերում գետերը դուրս են գալիս ափերից և վողոգում խոտհարքները, կամ ուժեղ անձրևներից հետո հոսող մեծ քանակությամբ ջրերը, վորոնք անցնում են հազարավոր հեկտարների վրայով: Այդ ժամանակ բույսերը կորցնում են իրենց մատղաշ սննդարար մասերը, մարգագետինները ծածկվում են խճով ու ավազով, իսկ խոտն էլ «սառչում» է ու անպետքանում: Նույնը կարելի յե ասել այն դեպքերի մասին, յերբ խոտը քաղվում է անձրևոտ լեղանակներին. այդ ժամանակ անձրևները բույսերի սննդարար նյութերը տանում, վաղոգում են:

Ինքնայրման կամ ինքնարոնկման մասին մենք խոսեցինք խոտը պահելու գլխում. այստեղ մենք միայն կշեշտենք այն հանգամանքը, վոր ինքնայրում տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ խոտը թաց վիճակում է գիզվում, մանավանդ յերբ նա կազմված է լինում գլխավորապես թիթեկոնածաղիկների ընտանիքին պատկանող բույսերից, վորոնք շատ հարուստ են սպիտակուցային նյութերով և հեշտ են յենթարկվում խմորման: Սոտի ուժեղ տաքացումից (միկրոբիոգանիզմի բեր գարգացման հետևանքով) խոտն ավազանում է և յերբ այդպիսի խոտի մեջ մուտք է գտնում թթվածինը, անմիջապես բռնկվում է: Այդպիսի դեպքեր ճիշտ է, հաճախ տեղի չեն ունենում, բայց պետք է ասել, վոր հենց մեղ մոտ 1932 թ. Սեմյոնովկայի անասնաբուժական խորհրատնտեսության խոտի մեկ սկիզբը, վորն ինչպես պարզվեց, թաց վիճակում էր դիզվել, բռնկվեց և մեծ մասն այրվեց: Դիզված խոտը, յեթե նկատվում է, վոր շատ տաքացել է և կարող է բուռնկվել, չպետք է անմիջապես բացել, այլ անհրաժեշտ է հողի

շերտով ծածկել և սառչելուց հետո միայն քանդել ու նորից դիզել
ալիւի հարմար և չորացած վիճակում:

Սոտի հիվանդութիւնները և փասսատուները մեծ չափով
ազդում են բույսերի զարգացման սկզբնական շրջանում: Դրանք
փասսելով բույսերի գլխավոր որգանները, ազդում են նրանց նոր-
մալ անցողութեան վրա, վորի հետևանքով վոչ միայն մարգա-
գետիներէից քիչ քանակութեամբ ե խոտ ստացվում, այլև ստաց-
ված խոտը շատ ցածր վորակի յե լինում, վորով անասունները
կերակրվելիս շատ հաճախ ստանում են դանազան հիվանդութիւն-
ներ: Կերարուսերի հիվանդութիւնները կարելի յե բաժանել
յերկու խմբի. բուսական ծագում ունեցող փասսատուներից առա-
ջացած և կենդանական ծագում ունեցող փասսատուներից առա-
ջացած հիվանդութիւններ: Բուսական փասսատուները լինում
են նույնպես յերկու տեսակի՝ սպորավորներ և սերմնավորներ:

Սպորավոր փասսատուներից ուշադրութեան արժանի յեն մի
քանի տեսակ սունկեր, վորոնք ազդելով բույսերի հիմնական
որգանների վրա, առաջացնում են մարգագետիների բերքա-
տվութեան անկում, ստացված բերքի փչացում և բացի այդ,
սնկերի արագ աճման հետևանքով, խոտի վրա առաջանում են
թունավոր նյութեր, վորոնք վատ են անդրադառնում անասուն-
ների որգանիվի վրա: Սնկային հիվանդութիւններից կերարուս-
երի վրա գոյանում են ժանգ, մրիկ և այրացող հիվանդութիւն-
ները: Այդ սնկերն ազդում են գլխավորապես խոտազգիներից՝
շյուղախոտի, ազվեսապոչի, վողնախոտի, արմոֆեյիվկայի, դաշ-
տավելի, ցորենուկի և ուրիշների վրա, իսկ թիթեռնածաղիկնե-
րից՝ յերեքնուկի, աովույտի և կորնդանի վրա: Մրիկի սպորներն
ընկնելով խոտագրի բույսերի ծաղկելու շրջանում հասկերի վրա,
զարգանում են և ամբողջովին վոչնչացնում ծաղիկները, առա-
ջացնելով պտուղների հատիկների փոխարեն սև գլխիկներ, վո-
րոնք առաջ են բերում անասունների լորձաթաղանթի վրա բոր-
բոջումներ: Բացի այդ, հղի կովերին այդպիսի բույսերով կերա-
կրելիս տեղի յե ունենում վիժում: Դրա դեմ պայքարել կարելի
յե միայն մինչև ցանելը՝ սերմերն ախտահանելու ու մաքրելու
միջոցով:

Ինչ վերաբերում ե ժանգ հիվանդութիւն առաջացող սնկե-
րին, պիտք ե ասել, վոր դրանք փասում են ինչպես խոտագրի-
ներին, այնպես ել թիթեռնածաղիկներին: Ժանգը տարածվում ե
բույսերի տերևների վրա, առաջացնելով դարնտնը շագանակա-

գույն, իսկ աշնանը՝ մուգ սև գույնի դժեր և դրանով իսկ վոչնչաց-
նում կանաչ տերևները: Ժանգ առաջացնող սնկերը ձմեռում են
սպորների միջոցով և դարնանը հեշտութեամբ տարածվում նորից
կերարուսերի վրա, մոլախոտերի (իշակաթնուկ, գորտնուկ, գա-
նազան փշեր և այլն) միջոցով: Դրա դեմ կարելի յե կովել՝ մոլա-
խոտերը վոչնչացնելու միջոցով, կամ վարակված մարգագետին-
ներն այրելու միջոցով:

Բույսերի սերմավոր փասսատուներն են այսպես կազված
պարադիտ և կիսապարադիտ բույսերը, վորոնք ունեն իրենց մար-
մինների վրա ծծելու վորոշ հարմարութիւններ (ծծիչներ). այդ
հարմարութիւններով ծծում են կերարուսերի որգանական կա-
րևոր սննդանյութերը: Դրանցից առաջիններն իրենք բոլորովին
չեն արտադրում սննդարար նյութեր, այլ ապրում են կերարուս-
երի հալիւն (պարադիտներ), իսկ յերկրորդները՝ թեպետ և ար-
տադրում են սննդարար նյութեր ասսիմիլիացիայի միջոցով,
բայց դրանք նույնպես ունեն ծծիչներ, վորոնք խլում են կերա-
րուսերից վորոշ քանակութեամբ սննդանյութեր (կիսապարադիտ-
ներ): Պարադիտներից են՝ ճրագախոտը (զարագիլիս) և դադճը
(կասկուտա): Ճրագախոտը քլորոֆիլից զուրկ պարադիտ բույս
ե, վորը ընակվում ե յերեքնուկի, աովույտի և ուրիշ թիթեռնա-
ծաղիկ բույսերի արմատների վրա: Յերք դրա սերմերն ընկնում
են բույսի հյուսվածքներում, բույսն սկսում ե թուլանալ և ապա
վոչնչանալ: Ճրագախոտի դեմ կարելի յե պայքարել նրան արմա-
տախիւ անելով (յիթե քիչ ե տարածված), կամ ամառվա ընթաց-
քում դրանով վարակված բույսերը մի քանի անգամ քաղելով,
իսկ շատ տարածվելու դեպքում՝ պիտք ե կատարել խոր վար, կամ
բոլորովին դադարեցնել տվյալ հողամասում մի քանի տարվա
ընթացքում թիթեռնածաղիկ բույսերի մշակումը:

Դադճն իր ծծիչներով մտնում ե աովույտի, կորնդանի և
իերեքնուկի ցողունների ներքին մասը և ամբողջովին սնվում
դրանցով, վորի հետևանքով բույսերը հյուսվում են և վոչնչա-
նում: Դադճը տարածվում ե սերմերի միջոցով: Նրա սերմերն այն-
քան դիմացկուն են, վոր անասունների ստամոքսով անցնում են
առանց փասսավելու և ձուլնակութիւնը կորցնելու: Նրանց դեմ
կարելի յե պայքարել բույսերը շուտ քաղելով (մինչև ծաղկելը),
այդ տեղերն այրելով, իսկ շատ տարածվելու դեպքում՝ վարելով,
կամ տվյալ տեղից բոլորովին վերացնելով թիթեռնածաղիկների
կուլտուրան (մանավանդ յերեքնուկը): Մեզ մոտ բավական տա-

րածված կիսապարադիաներից վոլյախոտը, քարխոտը և դոսուկը, թեպետ ունեն կանաչ տերևներ, բայց և այնպես ֆլուս հասցնում են, յերբ դրանց սերմերն ընկնում են կերարուեստի արմատների վրա, վորովհետև իրենց ծծիչները գցում են բույսերի հյուսվածքներում և այնտեղից ծծում սննդարար նյութերը:

Կենդանական ծագում ունեցող ֆլուսատուներից հայտնի յեն առանձնապես իրենց ֆլուսակար ազդեցությամբ՝ մորիխը, մարգատեանային թիթեռը և մի շարք այլ միջատները: Այս ֆլուսատուները՝ ուտելով բույսերի մասերը, դադարեցնում են նրանց աճումը և այդպիսով վոչնչացնում բույսերը: Բացի բերքատուլությունը պակասեցնելուց, այդ միջատները խոտի վրա թողնում են իրենցից արտադրած վորոշ նյութեր, վորոնք խոտի հետ անցնելով անասունների ստամոքսը՝ զանազան հիվանդութուներ են առաջացնում: Դրանց դեմ պայքարելու համար՝ խոտի պահեստներում պետք է պահպանել ջերմության ցածր աստիճան, կամ ժամանակ առ ժամանակ բաց անել դռները, վորպեսզի ողափոխություն կատարվի խոտի պահեստներում, վորովհետև միջատները ցուրտ պայմաններում չեն կարողանում լավ զարգանալ: Բացի այդ, անհրաժեշտ է՝ մինչև խոտը դիղելը, կատարել շենքի ախտահանում և յերբեմն ել պետք է նափտալին շաղտալ շենքի պատերի վրա: Իսկ դաշտերում դրանց դեմ պայքարում են զանազան դեղերի միջոցով: Ստոր կենդանական ֆլուսատուներից են նաև մկները: Մկներն իրենց բները շինելով խոտի պահեստներում և դեղի հիմքերում, սկսում են մանրացնել խոտը, վորն ստանում է միաժամանակ և շատ անհաճո մկան միզի հոտ: Անասունները խուսափում են այդպիսի հոտ ունեցող խոտն ուտելուց: Պետք է ասել, վոր մկներն առանձնապես շատ են լինում այն խոտի պահեստներում և գեղերում, վորտեղ դիղված է լինում թիթեռնածաղիկներից կաղմված խոտը: Դրանց դեմ պայքարելու համար պետք է նախ և առաջ լավ ախտահանել խոտի պահեստները ծծմբածխածնով, բացի այդ, մկների դեմ գործ են ածում և վորոշ թույներ, վորոնցով վարակելու դեպքում նրանք միաժամանակ վոչնչանում են:

Ց Ա Ն Կ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3—4

1. Խոտաբույսի սեսալները 5—7

2. Խոտի բուսաբանական կազմը 7—9

 1. Կերային խոտազգիները խումբը 9—16

 2. Կերային թիթեռնածաղիկներ (ընդդեմներ) 16—22

 3. Կերային այլախոտեր 22—25

 4. Գլխավոր թունավոր ու ֆլուսակար բույսերը 25—27

3. Խոտի կազմաբաժնի (սննդարար նյութեր) 27—30

4. Խոտի հավաքելը յեկ պահպանելը 30—35

 1. Սոտը քաղելու ժամանակը » — »

 2. Սոտը քաղելը 36—37

 3. Կանաչ խոտի չորացումը 37—45

 4. Գորշ խոտի պատրաստելը 45—46

 5. Սոտը պահելը 46—50

5. Խոտը մամլելը 50—51

 1. Ձեռքի մամլիչներ 51—52

 2. Անընդհատ աշխատող մամլիչներ 52—54

6. Խոտի զննահատումը 54—55

 1. Կանգնատալի շկալան 55—56

 2. Վիտամակի շկալան 56—58

 3. Պրոֆ. Բոգդանովի շկալան 58—61

7. Խոտի քաղը վորոշելը 61—65

 1. Սոտի բերքը վորոշելը չքաղված վիճակում 65—66

8. Խոտի վիճակն ու վնասատուները 66—70

9. Յ ա ն կ 71



« Ազգային գրադարան



NL0287593

75 4000.

18441



Е. КАЗАРЯН

Кормовые растения их уборка, сушка и хранение

Сельхозгиз

1934

Эривань